

Դամասկոսի մէջ դատարար մը յառաջիկայ օրերուն պիտի սկսի հարցաքննել 26 պաշտօնատարներ, որոնք կը համարուին Չէյպուսի ամբարտակին փոլուսման պատասխանատուները:

ՍԱՆ Ալլրատու գործակալութիւնը հաղորդեց, որ հարցաքննություններուն շարքին պիտի ըլլան ռոզգուան հարցերու նախարարութեան պաշտօնէական եւ շինարարներ: Դատարարը հարցաքննությունները ամբողջացնելէ ետք, ամբաստանագիրներ պիտի լինէ:

Անցեալ ամիս Համայի մէջ գտնուող Չէյպուսի ամբարտակը փոլու եկաւ՝ սպաննելով անուուսկն 20 հոգի եւ ամբողջութեամբ կործանելով Չէյպուսի գիւղը: Աւելի քան 8 հազար հոգի անտուն մնաց:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ՆԱԽԱԳԱՇ ՄՈՒՊԱՐԱՔԻ ԸՏԵՑ ՔՆՆԱՐԿԵՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԸԱՐՅԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ժեմտային կարճատեւ այցելութեան մը համար ուղղուեցաւ Գահիրէ. ան եզրիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի հետ տեսակցելէ ետք վերադարձաւ Մէնուական Արաբիա:

Հաւատեղեակ աղբիւրներ հաղորդեցին, որ շրջանային զարգացումներուն եւ պաղեստինեան բեմի իրազարձակութիւններուն յոյսին տակ, վարչապետ Հարիրի ժեմտային ուղղուեցաւ Գահիրէ, ուր նախագահ Հիւսնի Մուպարաբի հետ մէկ ժամ տեւած տեսակցութեան ընթացքին քննարկեց շրջանային իրազարձակութիւնները, ինչպէս նաեւ Լիբանան - Եգիպտոս յարաբերութիւններուն ամրապնդումը: Ապա Գահիրէէ վերադարձաւ ժեմտա, շարունակելու համար սէնտեղի պաշտօնատարներուն հետ իր խորհրդակցութիւնները:

Մուպարաբի հետ տեսակցելէ ետք, թղթակիցներու հետ հանդիպումի մը ընթացքին, Հարիրի հաւաստեց, որ Լիբանանի նուիրատու երկիրներու եւ կազմակերպութիւններու Փարիզ-2 ժողովին գումարման պայմանները «հասունցած են» եւ հրահրեալ երկիրները յաջողաբար կը յայտնեն իրենց պատրաստակամութիւնը՝ մասնակցելու ժողովին, օգնելու համար Լիբանանի եւ անոր կողմին կանգնելու՝ ընդդէմ անոր դիմագրւած տնտեսական մարտահրաւրներուն:

Հարիրի ըսաւ, որ իր կառավարութիւնը նախնաձախորդի է Եւրոպայի հետ գործընկերութեան համաձայնագրերը ստորագրելէ ետք Լիբանանը վերածելու լիբանանեան եւ արաբական արտադրութեան արտածման կեդրոնի:

«Լիբանան, Եւրոպայի հետ գործընկերութեան համաձայնագրեր ստորագրելով, մեծ առիթ տուաւ արաբական դրամագրութիւններուն»՝ Լիբանանի մէջ ներդրումներով թափանցելու եւրոպական եւ արաբական շուկաներ», ըսաւ Հարիրի եւ ըսցատեց, որ արաբա-



Հարիրի կը տեսակցի Մուպարաբի հետ

կան երկիրները իրենց արտադրութիւնները կրնան ամբողջացնել Լիբանանի մէջ եւ ապա զանոնք Եւրոպա արտածել, որովհետեւ գործընկերութեան համաձայնագրին հիմամբ, ամէն ապրանք, որուն պատրաստութեան 40 առ հարիւրը կատարուած է Լիբանանի մէջ, կարելի է առանց արգելքներու վաճառել եւրոպական շուկաներէն ներս: Ուստի ասիկա Լիբանանի, Եգիպտոսի, Սուրիոյ, Յորդանանի եւ Մէնուական Արաբիոյ տնտեսական յարաբերութիւնները ամրապնդելու պիտի ծառայէ:

Հարիրի հաւաստեց, որ ոչ մէկ քաղաքական նախապայման կար Լիբանան - Եւրոպա գործընկերութեան համաձայնագրին ստորագրութեան:

Հարիրի Շարաթ օր տեսակցութիւններ ունեցած էր Մէնուական Արաբիոյ գահաժառանգ Ապտալա իշխանին, պաշտպանութեան նախարարին եւ արտաքին գործոց նախարարին հետ:

ԱՐԱՅԱԹ ԿԸ ԳԻՄԱԳՐԱԻՆ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐ



Իսրայէլացի զինուորներ կը հսկեն ձերբակալուած երկու պաղեստինցիներու վրայ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթը քննարկեց Երուսաղէմի մարտահրաւիրները ու դժուարութիւնները կը դիմագրաւէ՝ բարեկարգումներու ծրագրի գործադրութեան ձեռնարկելէն ի վեր: Պաղեստինեան իշխանութեան պաշտօնատարները արտաստուները անբարեկամութիւններու արտաքին արտածման կեդրոնի:

Պաղեստինեան իշխանութեան պաշտօնատարները արտաստուները անբարեկամութիւններու արտաքին արտածման կեդրոնի:

Պաղեստինեան իշխանութեան պաշտօնատարները արտաստուները անբարեկամութիւններու արտաքին արտածման կեդրոնի:

Շար.՝ էջ 2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՊԷՏՔ Է ՅԱՅՏԱՐԱՐԵԼ

ՎԵՍԷ Ն. ՊԵՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երէկ Սուրի մէջ բացումը կատարեց ծխախոտի հողագործի մեծարման Ը. փառատօնին:

Այս առիթով արտասանած իր խօսքին մէջ, Պերրի ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ ամրապնդելու ազգային միասնականութիւնը, համատեւական քաղաքականութեան մը շուրջ եւ քաղաքական հաշուեյարդարներուն ու ներքին մանր պատերազմներուն վերջ դնելով պատասխանատու մտեցում ցուցաբերելու ազգային գերագոյն շահերուն նկատմամբ:

«Սկզբունքային է Լիբանանի հանդէպ վստահութիւնը կերտելու առաքելութիւնը, որ անհրաժեշտ է ոչ միայն Լիբանանի, այլ բոլոր արաբներուն, եւ պէտք չէ մոռնալ, որ կարելի չէ Լիբանանի հանդէպ վստահութիւնը կերտել, առանց ամրապնդելու պետութեան նկատմամբ վստահութիւնը», ըսաւ Պերրի՝ ընդգծելով, որ պետութիւնը չի կրնար անձ մը, կուսակցութիւն մը, համայնք մը կամ կողմ մը դառնալ, որովհետեւ օրէնքի եւ հաստատութիւններու ներդաշնակ կառոյց է:

Պերրի ըսաւ. «Բոլորը ուշադիր պէտք է հետեւին շրջանային անցուղարձերուն, որովհետեւ Լիբանան այսօր ուղղակի քիրախ է, եւ աշխատանք կը տարուի Միջին Արեւելքի մէջ գոհը ներկայացնելու իբր յանգանակ: Իսկ պատերազմի ոճրագործ իսրայէլացի դահիճները իբրեւ խաղաղասերներ ներկայացնելու ի տես, զի նախորդ առաջնահերթութիւն կը դառնայ ազգային միակամութիւնը»:

«Տնտեսական եւ ընկերային վիճակը կը վատթարանայ եւ անհրաժեշտ է հրաժարիլ մեծամրտութեան ու անտեսումէն, անկեղծօրէն խոստովանիլ ճշմարտութիւնը, մոռնալ ներքին ճակատները եւ հռչակել տնտեսական ստիպողական վիճակ», ըսաւ ան: «Իշխանութիւնը, անոր համակիրները, բայց նաեւ ընդդիմադիրները, խորհրդարանէն ներս գտնուողներն ու անկէ դուրս մնացածները, որոնք անցեալին բռնաբարած են ժողովուրդին կամքը, աջակողմեաններն ու ճախակողմեանները, ներկայ եւ անկեղծ իշխանաւորներ, որոնք դատարար եւ դահիճ եղած են, բոլորը անհրաժեշտ պատասխանատու են այս վիճակին եւ ոչ ոք կրնայ ըսել, թէ ի՞նչ մասնակցի չէ եղած բարգաւաճ հայրենիք ունենալու լիբանանեան երազի խորտակումին եւ գայմ մղաւաճային վիճակով փոխարինելու յանգանակ մէջ», նշեց Պերրի:

ԱՑՂԱՆԻՍՏԱՆԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՀԱՔԵԿՈՒԵՑԱԻ

ՔՍՊՈՒԼ, 7 (ՌՈՅ-ԹԸՐԶ).- Հապարաւոր աֆղաններ Կիրակի օր ներկայ գտնուեցան մայրաքաղաք Քապուլի գիւղատեղում մէջ, ուր թաղուած են նաեւ նախկին թագաւոր Ամանուլլահ խանի եւ իր ընտանիքին կարգ մը անդամներ:

Անոր գերեզմանին մօտ կայ իր ճարտարապետի կողմէ գերեզմանը՝ Ապտիլ Հաքի գերեզմանը: Այս վերջինը անցեալ «Նոկուստի»-րին թալանարկութիւններու կողմէ մահապատիժի ենթարկուած էր, մինչ ԱՖղանիստանի ներս ընթացող զինուորները կը կազմակերպէին:

Քատիրի սպանութիւնը մեծ հարուած մըն է Քարպայի ճիգերուն՝ կառուցելու կայուն կառավարութիւն մը, որ պիտի կարենայ երկիրը դուրս բերել 23 տարուան պատերազմէն եւ առաջնորդէ դէպի ընտրութիւններ (18 ամիսէն): Ան սպանուած է անձանօք պինեալներու կողմէ:

Ըստ Աֆղան իսլամական Մամուլին, ան թաղուած է ճալալապատի «Ամիր Շահիտ» պարտէզներուն մէջ, ուր թաղուած են նաեւ նախկին թագաւոր Ամանուլլահ խանի եւ իր ընտանիքին կարգ մը անդամներ:

Անոր գերեզմանին մօտ կայ իր ճարտարապետի կողմէ գերեզմանը՝ Ապտիլ Հաքի գերեզմանը: Այս վերջինը անցեալ «Նոկուստի»-րին թալանարկութիւններու կողմէ մահապատիժի ենթարկուած էր, մինչ ԱՖղանիստանի ներս ընթացող զինուորները կը կազմակերպէին:

Քատիրի սպանութիւնը մեծ հարուած մըն է Քարպայի ճիգերուն՝ կառուցելու կայուն կառավարութիւն մը, որ պիտի կարենայ երկիրը դուրս բերել 23 տարուան պատերազմէն եւ առաջնորդէ դէպի ընտրութիւններ (18 ամիսէն): Ան սպանուած է անձանօք պինեալներու կողմէ:

ԹՈՒՐԸԻՍ

ՊԱՀՉԵԼԻ ԿԱՆՈՒՆԱԶԱՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

ԱՆԳՐԱՒԱ, 7 (ՌՈՅ-ԹԸՐԶ).- Մինչ Թուրքիոյ վարչապետ Պիլիկի ինչեքի իր Կիրակի օր դարձեալ հաստատած է, որ հրաժարելու նպատակ չունի եւ փորձառութեամբ գիտնէ, թէ երբ պէտք է մեկնի, փոխ վարչապետ, ազգայնական ղեկավար Տեւրիթ Պահչելի Նոյնմերիին հանրահաս ընտրութիւններու առաջարկ կատարած է:

Ելեւմտական շուկաները ունին այն մտաւախութիւնը, թէ հիւանդ վարչապետին քաղաքականութիւնը կրնայ քաղաքական «պարապ» մը ստեղծել երկիրի մը մէջ,

որ կը փորձէ գործադրութեան դնել (Դրամական Միջազգային Ֆոնդի) փոխ վարչապետ վարչապետ Պիլիկի ինչեքի 16 միլիոն տոլար արժողութեամբ տնտեսական ծրագրի մը: Հիւանդ ինչեքի, որմէ հետզհետէ աւելի ու աւելի կը պահանջուի, որ հրաժարի՝ նկատի ունենալով, որ Մայիսի սկիզբէն ի վեր ան իր ընկերային ղեկավարները կը կրցած տանիլ, Կիրակի օր պնդած է, որ ներկայիս նպատակ չունի հրաժարելու:

Պահչելի թղթակիցներու ըսած է, որ Թուրքիոյ մէջ կայ քաղաքական

անորոշութիւն, որ կը նկատուի այն ազդակը, որ «կ'ընդդիմանայ» տնտեսական ծրագրին գործադրութեան յաջողութեան:

Ան յայտնած է, որ խորհրդարանը, որ ներկայիս մամուլային դադարի մէջ է, Սեպտեմբեր 3ին կ'անցնէ ժողով մը գումարէ եւ որոշէ կանխահաս ընտրութիւններ կատարելու:

Սկզբունքով բեքսիտիստական ընտրութիւններ պէտք է կայացուին Ապրիլ 2004ին, երբ ձախ-ալ կ'առաջարկան ընկերակցութեան 5 տարուան նստաշրջանը աւարտի:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ՝ ԵՐԵՒԱՆ - ԱՆԳԱՐԱ ՀԱՐՅԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատար մը խումբ մը հայ լրագրողներու հետ Ուաշինկթընի մէջ հանդիպումի մը ընթացքին յայտարարած է, թէ Ուաշինկթըն պատրաստ է միջնորդելու Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հարցերու լուծման համար: Պաշտօնատարը, որ պահանջած է չբացայայտել իր ինքնութիւնը, յայտնած է, թէ Ուաշինկթընի միջնորդութիւնը կրնայ իրականացնել միայն թէ՛ Երեւան եւ Անգարա նախնաձախողութիւններ ցոյց տան այդ ուղղութեամբ:

Շար.՝ էջ 2

ԸՍՏ Դ. ՅՈՎԱՏԻՍԵԱՆԻ

«ՀԱՅ - ԹՐԲԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՒՆԵՑԱԾ Է ԱՐԴԻՒՆԱԻՏ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ»

«Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողովը» Յուլիս 10էն 13 հանդիպում մը պիտի ունենայ Թրքական Պոտրում քաղաքին մէջ:

Յանձնաժողովի անդամ, Սուրիոյ մէջ Հայաստանի նախկին դեսպան եւ Երեւանի Պետական Համալսարանի դասախօս Դաւիթ Յովհաննիսեան «Արմինֆօ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ հանդիպումին պիտի քննարկուին բազմաթիւ հարցեր, եւ միայն հանդիպումէն ետք հաւանաբար յայտարարութիւններ կատարուին արժարժուած նիւթերուն շուրջ:

Յովհաննիսեանի համաձայն, Յանձնաժողովը պիտի փորձէ վերստին մեկնարկել իր գործունէութիւնը, սակայն «չարք մը պայմաններու շուրջ համաձայնութիւն պէտք է կայանայ»: «Երկկողմանի յարաբերութիւնները կարելի է շարունակել, եթէ միւս կողմը նկատի առնէ պատմութիւնը եւ յաճմ առկայ իրադրութիւնը», նշած է Դաւիթ Յովհաննիսեան:

Խօսելով հայ - Թուրք յարաբերութիւններուն զարգացման մէջ «Հաշտութեան յանձնաժողովի» ունեցած դերակատարութեան մասին՝ Յովհաննիսեան ըսած է. «Այն իրողութիւնը, որ երկու երկիրներուն միջեւ կապերը վերջին տարուան ընթացքին եղած են բարձրագոյն մակարդակներու վրայ, ցոյց կու տայ, թէ «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողովի» գործունէութիւնը եղած է արդիւնաւէտ»:

Ինչ կը վերաբերի Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւններուն միջեւ հանդիպումներուն՝ Յովհաննիսեան յայտնած է, թէ Հայաստանի թիւ մէկ խնդիրը երկրին ապահովութիւնն է, եւ թէ այդ հանդիպումները կ'ամրացնեն երկրին անվտանգութիւնը:

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԳՈՐԾԱՏԵՐԵՐՈՒՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆ ԿԸՍԵ ՍՖԵՐ

Մարտինիներու Պուլթրոս Սֆէյր պատրիարքը երէկ-ւան իր քարոզին մէջ արծարծեց աշխատաւորական հարցերը:

«Աշխատանքը ունի իր յատուկ կանոնները, զորս պէտք է յարգուին, եւ անոնք կը վերաբերին աշխատաւորին առողջութեան, աշխատանքի բնոյթին, աշխատաւորի սեռին եւ տարիքին: Եթէ ասոնք չյարգուին, ապա աշխատանքի պայմանագիրը ապօրինի կ'ըլլայ», ըսաւ ան եւ աւելցուց. «Պէտք է իշխանութիւնները ճշդ են արդար աշխատավարձ, որպէսզի ո՛չ գործատէրը ո՛չ ալ գործաւորը միւս կողմին կացութիւնը շահագործէ՝ անոր անարդար պայմաններ պարտադրելու համար»:

Սֆէյր յայտնեց, որ անցեալ շաբաթ իրեն այցելած են գործէ արձակուած աշխատաւորներ՝ զանգատելով իրենց ողբերգական վիճակէն: «Ըստեցաւ, որ բազմաթիւ գործարաններ փակուած են. սա կը նշանակէ, որ աշխատաւորական հարց ունինք եւ անհրաժեշտ է, որ իշխանութիւնը լուրջ աշխատանք տանի պաշտպանելու համար գործաւորներն ու գործատէրերը», նշեց ան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԼԶՊԱԼԼԱՅԻ փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմ երէկ զիտել տուաւ, որ «Եւրոպայի ձեռնտու չէ, որ դառնայ Միացեալ Նահանգներուն կցուած միակոր: Իսկ եթէ անիկա կ'ուզէ յատուկ մնալ, ապա լուսարձակները թող չկեղորոնացնէ շրջանի դիմադրութեան շարժումներուն վրայ եւ զանոնք ահաբեկչական թող չանուանէ, որովհետեւ այդ ձեւով պիտի կորսնցնէ շրջանի ժողովուրդներուն համակրանքը»:

● ՂՈՎՄԻ կուսակցութեան տեղեկատուութեան պատասխանատու Թուֆիք Մըհաննա կուսակցութեան հիմնադիր Անթուն Սաստիկ սպանութեան 53րդ տարեկիցին առիթով Ծաբաթ օր հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հաւաստեց, որ անոնք, որոնք կառչած կը մնան համայնքային վարչաձեւին, անոր սկզբունքներուն, բաժնեկցութեան ոճին եւ համախոհական ժողովրդավարութեան, անոնք են երկրի քաղաքական եւ ժողովրդավարական կեանքի գարգացման խոչընդոտները:

● ԲԱՆԱԿԻ հրամանատարութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ իսրայէլեան օդանաւեր երէկ կէսօրէ առաջ ժամը 11:00ին Լիբանանի օդային սահմաններէն ներս թափանցելով թռիչքներ կատարեցին հարաւի վերեւ ապա ձայնի պատը կարեցին մայրաքաղաքին վերեւ:

ՃԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Նոր Ամանոս շրջան, 160 քառ. մետր, բնակարանի, գործատեղիի, դարձնատան եւ տարրալուծարանի յարմարութեամբ: Դիմել հեռ. 01 - 262043, պարոն Ոսպերին:

Կ՝ՈՒԶՈՒԻՆ

● Շագուստի վաճառատուն մը կարիքը ունի փորձառու վաճառող օրիորդներու եւ երիտասարդներու: Վճարումի լաւ պայմաններ: Դիմել հեռ. 01-284746:

ԱՐԱՅԱԹ ԿԸ ԴԻՄԱԳՐՈՒԷ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն



Պաղեստինցիները էջով կը փոխադրեն իրենց ապրանքները, իսրայէլեան բանակին հաստատած արգելքներուն պատճառով

մը գումարեցին Ռամալլայի մօտ, ուր մերձեցին Ռաժուպի պաշտօնաւորներուն ու Չուհայր Մանասրայի նշանակումը: Անոնք ստորագրեցին աղերսագիր մը ու պայաններ կայացուցին Արաֆաթի, որպէսզի վերատեսուքեան ենթարկէ որոշումը: Տասնեակ մը այլ պատասխանատուներ բողոքի ցոյց մը կազմակերպեցին Շաբաթ օր Ռամալլայի մէջ, սակայն իսրայէլեան բանակին կողմէ կրակմարի վերահաստատումը պատճառ դարձաւ, որ ցուցարարները վերադառնան իրենց տուները: Տասնեակ մը պատասխանատուներ Շաբաթ երեկոյեան հանդիպում ունեցան Արաֆաթի հետ, իրենց ընդդիմութիւնը յայտնելու համար:

Մեկնաբաններ անհաւանական կը նկատեն, որ ներքին ճնշումները պատճառ դառնան, որ Արաֆաթ յետո կոչէ Ռաժուպը պաշտօնաւոր կելու որոշումը: Բայցեւայնպէս, ապահովութեան մարտի պատասխանատուներուն որդեգրած կեցուածքը, ցոյց կու տայ, որ Արաֆաթ ներքին ճակատի վրայ պայքար ունի մղելիք:

Ռամալլայի պապահովութեան կանխարգիւման ուժերու պատասխանատուն՝ Սալահ Յամալի յոյս յայտնեց, որ Արաֆաթ վերատեսուքեան ենթարկէ Ռաժուպի հանդէպ որդեգրած կեցուածքը: Թամայի որոշումը ի վորու պիտի մնայ, Արաֆաթն կը պահանջուի Ռաժուպը փոխարինողը ընտրել ապահովութեան կանխարգիւման ուժերու շարքէ-

րէն: Թամայի դիտելուտու, որ Արաֆաթի հանդէպ ընդդիմութիւնը կու գայ ոչ անպայման Ռաժուպը պաշտօնաւոր կելու պարագայէն, այլ՝ անոր փոխարէն քաղաքական նշանակում մը կատարած ըլլալէն: Մանասրա ժեհիւնի նահանգապետն էր:

Արաֆաթ փոփոխութիւնները կատարած էր՝ ընդառաջելով միջազգային ճնշումներուն, որոնք արմատական բարեկարգումներ կը պահանջէին: Իսկ Միացեալ Նահանգները եւ Իսրայէլ կը պահանջէին, որ պաղեստինցիները յառաջիկայ տարուան ընտրութիւններուն Արաֆաթը չվերընտրեն: Արաֆաթ պաշտօնաւոր կը ըլլաւ Երաւի ուժերու հրամանատար Մոհամէտ Տահլանը: Արաֆաթ յայտարարած է, որ պաղեստինցիներն շրջաններուն տարածքին գործող ապահովութեան ինք գործակալութիւնները պիտի սեղմուին չոր-

սի մէջ, ներքին գործոց նոր նախարարի մը հսկողութեան ներքէն:

Իսրայէլեան բանակին կեղծոնական հրամանատարութեան պետը՝ Կորալ Բոհաթ Էրան լուրջ ցոյց տալ, թէ փոխած է գործելաձեւը, եւ թէ բարեկարգումներ կը կիրարկէ: Էրան դիտել տուաւ նաեւ, որ Ռաժուպի կամ Տահլանի պաշտօնաւորները բարար չեն: Էրան աւելցուց, որ իսրայէլեան ուժերը Այալոնդանանի մէջ ձեռքարկելու հինգ ժայռայեղականներ, որոնք անձնասպանական գործողութիւններ կատարելու թեկնածուներ են:

Միւս կողմէ, Կապալի մէջ աւելի քան վեց

հազար պաղեստինցիներ մասնակցեցան յուղարկաւորութեան Ռանտա Հիւտիի եւ անոր երկու տարեկան աղջնակին՝ Նուրիի: Հապարաւոր պաղեստինցիները կը պաղարկէին լուծել վրէժը Ռանտայի եւ Նուրիի, որոնք պաղեստինցիներն են պաշտօնական աղբիւրներու համաձայն, սպանուած են իսրայէլացի զինուոր-

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ...

Շարունակուած Ա. Էջէն

«Միացեալ Նահանգներ կ'ուզեն, որ Հայաստան, Ազրայէլեան եւ Թուրքիա լաւ յարաբերութիւններ հաստատեն, ինչ որ զբաղան ազդեցութիւն պիտի ունենայ ամբողջ Հարաւային Կովկասի տնտեսական զարգացման վրայ», չեղած է արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարը՝ յայտնելով, որ «Հայաստանի կառավարութիւնը լաւ քաղաքականութիւն կը վարէ այս ուղղութեամբ»: Այս առումով ան յիշած է Ուշթիւրիի եւ Պոլսոյ մէջ Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն հանդիպումները: Ան նաեւ յայտնած է, թէ Թուրքիա պատրաստ է կշռադատուած քայլերով «յառաջանալ մինչեւ ճամբուն կէտը», սակայն աւելցուցած է, թէ կան անցելի եկող հարցեր, զորս կարելի չէ մէկ օրուան մէջ լուծել: Պաշտօնատարը յատկապէս շեշտած է, թէ Հայկական Յեղափոխութեան հարցը քաղաքականացուած է:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարը նաեւ անդրադարձած է Հայաստանի մէջ ուստական զինուորական ուժերու ներկայութեան՝ նշելով, որ այդ ուժերուն ներկայութիւնը անկայունութեան ազդակ չէ: Ան յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ պիտի օժանդակեն Ազրայէլեանի ծովային արդիականացման:

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue de Damas
Tel: (02) 619885/6/7/8 - Fax: (02) 619941
Rue Bidan - Face Cinema Jeune d'Arc
Tel: (02) 739879/82/9/6 - Fax: (02) 340473
Website: www.taniatravel.com
Step եւ մտքէն ժողովրդային

Table with 2 columns: Destination and Price. Includes rows for PALMA DE MALLORCA, ESPAGNE, PORTUGAL & MAROC, RHODES, MYKONOS.

ՃԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Տըպայայ, High Pointի մէջ, 3 մնջատեղակ, հիւրասենեակ, ձաշատեղակ, կահաւորուած խոհանոց, 2 բաղնիք, էր բոն-տիսիոն, «սուրը սիսթըմ» ջուրի ջեռուցիչ, 4րդ յարկ, գեղատեսիլ դիրք: Գին՝ 75,000 \$: Հեռ. 01-800268:

ՃԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Ճամբորդութեան պատճառով, 140 քառ. մետր տարածութեամբ, գեղատեսիլ դիրք, բնակարանի, գրասենեակի կամ դարձնատան յարմար, Պաուլի, «Կալերի Իթի-հատ»ի մօտ, հեռ. 03-226435 եւ 01-899718:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԲՈՐԱՏՆ ԵՒ ԳԻՆ ԱՅՍ ԱՍԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ ԱՏՈՂԱԿ ՍՍՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ ԿԵՍ ՃԱՆՈՅ ՎԵՍԵՐՈՒ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՌԻՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵԿԱՐԵՐՈՎ
Դիմել՝ ԱՐԱ ԶԵԲԵԾԱՆ ԸԱՍՏ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

Vivacite
Newly Opened
ՄԱՐԶՈՒՄԻ ԵՒ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ
ժողովրդի քաղաքայնացման մօտ, Մաքստոնալտի դիմաց, Սենթըր «Շարա»
Բ. յարկ: Հեռ. (03) 587077:

ASHJIAN TOURS
Առաջին անգամ ըլլալով արագընթաց նաւով 190 վայրկեանէ կ'որոշու 3 ՕՐ. Ա. կարգի պանդոկ նախաճաշ-տոմսակ - 118\$
4 օրը 140\$ - 7 օրը 192 \$ԱՄԵՆ ԵՐԵՅՔԻ ԵՒ ՈՐԵՔՔ օրերը
8 օր CALYPSO զբօսանալով, Կիպրոս, Ռոտտո, Աթենք եւ Յունական կղզիներ, Վրացերը ձիւ, լիմա ձաշերով եւ ամեն գիշեր տարբեր խրախմբանք
Հայաստան 9 Օգոստոս - 15 օրը 780\$, 22 Օգոստոս - 15 օր 800\$, իսկ մէկ շաբաթ 525\$
VARNԱ մէկ շաբաթ 285\$, երկու շաբաթ 385 \$
Ամեն օր մեր գրասենեակին անցնեն անուտ եւ երեկոյ շքեղ օրորարներով Պամակո միայն 6,000 Լ. ոսկի - Հալէպ 10,000 Լ. ու., առաջնակարգ հիւրասիրութիւն
Ամեն Կիրակի Դամակո - Սէյտայա - Պաուլան միայն 13\$ Կանա, Սայտա, Սուր 8\$ - Տարայա, ժաիրա 8\$
ԱՇԵՆԱՆ ԹՈՒՐԿ Հեռ. 01-261177, 240654 03-233978, գիշերը 01-258887 Amitours Tel. 01-898226 եւ 03-292600

SHOWER CABINE CENTER
Այլազան մոտէլներ, պատրաստ եւ ապարանքի վրայ: Զանազան չափերով կազմուած, ալիմինիում եւ փլասթիկ Ս. P. V. C. եւ ապակի նկարով: Կառուցուած է լոգանքի յատուկ խցիկներու համար Bac a Douche et Bainoire: Մատչելի գին, տեղադրելը՝ ձրի, երաշխաւորուած աշխատանք:
Դիմել՝ ԹԱՂԵՆԱՆԱՅԵԱՆ ՀԱՄԱՊԱՏՈՒԹԻՆ, Ստրէյ Պաուլի, Բալիկ Շամուկ պողոտայ, հեռ. 03-392088, 03-476018:

ONE SECOND IS ENOUGH... Արհասը կը Պատահի Երկուրեւեքսն Մը Մէջ...
...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՆ ԵՐԿՈՒՅ ԵՄ ԱՄԵՆ ԵՐԿՈՒՅԵԱՆ.
ԱՖՀԻԼ AFHIL
Աֆիլի Ընթ. Բ. Ձալի, Գեռ. եւ Ճաքս. (01) 262231-242556-242557
Tm. AFED, 2ème étage. Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Վան - Մուշ - Անի Աղբամար - Կարս - Արարատ...
\$985 (Full Board)
Օգոստոս 23 - Սեպտեմբեր 1 (10 օր)
Ձեր տեղերը ապահովելու համար դիմել ANSER TOURS հեռ. 01-562044-5 01-562870-1
Աւետիս Զափարեան, հեռ. 03-283347
ԵՐԹԵՒԵԿԸ ՕՊԱՆԱԵՐՈՎ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՆԶՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵՄԸ

«ՈՒՐԱՆԱՅԻՐ ՈՒՐԱՆԱՅՈՒՐ» ԽԱՆՈՒԹԻ ԲԱՅՈՒՄ

Ուրիշին օժանդակելու եւ կարիքաւորին ծանր վիճակը կարելի եղածին չափ թեթեւեցնելու առաքելութիւնը անպայման ձրիարար տալուն մէջ չի կայանար: Այս ծառայութեան շրջագիծը լայն է ու ընդարձակ:



Առաջնորդ սրբազանը իր խօսքի պահուն

Այս ծիրին մէջ, Ազգային առաջնորդարանի ընկերային եւ տիկնանց յանձնախումբերու գնահատելի նախաձեռնութեամբ եւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպօ. Խաչերեանի կողմէ՝ Շարաթ, 6 Յուլիսի առաւօտեան ժամը 10:30ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ բակին կից գտնուող սրահին մէջ տեղի ունեցաւ «Ուրախացիր Ուրախացուր» խանութի բացումը: Հոն գետեղուած հագուստեղէնները բաւական մատչելի սակերով կը վաճառուին եւ առիթ կու տան ունէ անհատի այդ ծրագիրէն օգտուելու եւ նոյն ատեն իր մասնակցութիւնը բերելու ծերունիի մը կամ մանուկի մը օժանդակութեան:

Բացման հանդիսութեան բարի գալուստի խօսք արտասանեց Նիլի Վէքիլեան, որ անդրադարձաւ Ազգային առաջնորդարանի ընկերային յանձնախումբի գործունէութեան՝ ներդրում կարիքաւոր աշակերտներու ֆոնտին, մնալուն այցելութիւն հայ բանտարկեալներուն եւ օժանդակութիւն անոնց ընտանիքներուն, եւ այլ օգնութիւններ հայ մանուկներուն եւ ծերերուն:

Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն բարե-
Շար.Չ՝ էջ 10

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ՍԻՆԻՈՐԱՅԻ ԸՆԵՑ ԲՆՆԱՐԿԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸԱՐՑԵՐ



Զօր. Լահուտ կ'ընդունի Գալարար Համմուտը

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ Շարաթ օր ընդունեց ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիորան, որուն հետ արծարծեց երկրին տնտեսական վիճակին առնչուած հարցեր, ինչպէս նաեւ ելեմուտքի նախարարութեան կողմէ տարուած աշխատանքը՝ պետական մարզերը բարելաւելու, մսխումները եւ երկրին պարտքը նուազեցնելու համար:

Սինիորա յայտնեց, որ նախագահ Լահուտը տեղեակ պահած է յաւելել արժէքի տուրքի միջնէ օրս արձանագրած արդիւնքէն եւ յաջորդ շրջանին համար նախարարութեան պատրաստած նոր ծրագրերն են:

Նախագահ Լահուտի այցելեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ: Հանդիպումին արժեւորումը կատարուեցաւ Միջին Արեւելքի մէջ շրջանային եւ միջազգային հաղորդակցութիւններուն, յատկապէս Լիբանանի մէջ՝ նախարարութեան, ստացած դիւանագիտական զանազան տեղեկագիրներուն լոյսին տակ:

Համմուտ յայտնեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած են արաբական վեհաժողովին որոշումները հետապնդող յանձնախումբին նիստին աշխատանքները եւ շեշտը դրած են անոնց կարեւորութեան վրայ՝ նկատի ունենալով մանաւանդ խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը: Նշենք, որ յանձնախումբը իր նիստը պիտի կայացնէ Գահիրէի մէջ յառաջիկայ 12 Յուլիսին:

Նախագահ Լահուտ Համմուտի հետ նաեւ անդրադարձած է ՄԱԿի ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենայ 10 Սեպտեմբերին, ինչպէս նաեւ յառաջիկայ Օգոստոսին Ճոհանէսպուրի մէջ տեղի ունենալիք բարգաւաճման աշխատանքներու վեհաժողովին:

Քննարկուեցան նաեւ Միջին Արեւելքի կացութեան յատկացուած Լոնտոնի ժողովի արդիւնքները եւ 15 Յուլիսին Նիւ Եորքի մէջ նոյն հարցով կայանալիք ժողովը:

ՈՒՍՉԻ ԻՐԱՆԻԻ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ռամզի իրանի մահուան քառասունքին առիթով, երէկ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն մը, որուն նախագահեց մարոնիներու Պէյրութի առաջնորդ Պուլոս Մաթար եպիսկոպոս: Ներկայ էին նախարարներ Փիեռ Հըրու եւ Ժորժ Աֆրամ, ինչպէս նաեւ մեծ թիւով երեսփոխաններ եւ տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչներ: Իր խօսքին մէջ Մաթար հարց տուաւ, որ ինչպէս կրնայ ապահովական այս կացութեան մէջ նման մահ ունենալ Ռամզի իրանի: «Ինչ էր նպատակը անոր սպանութեան եւ ինչ են արդիւնքները անոր սպանութեան շուրջ կատարուած հետաքննութեան», հարց տուաւ ան:

Շար.Չ՝ էջ 10

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

6 Յուլիսի թիւով տեղական մամուլը գլխաւորաբար լուսարձակի տակ առած է Ֆրանսայի արտաքին արտաքին գործոց նախարար Տոմինիք Տը Վիլիէի Պէյրութ այցելութիւնը՝ միջին արեւելեան շրջապատույտի առաջին հանգրուանին: Ըստ թերթերուն, նախագահ Լահուտի հետ իր ունեցած հանդիպումին ան վերահաստատած է Ֆրանսայի յանձնառութիւնը՝ Լիբանանի օժանդակելու: Այս մասին «Պարաք» օրաթերթը գրած է. «Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը ըսաւ. Ֆրանսական ընկերութիւններ կը փափաքին Լիբանանի տնտեսութեան վերականգնման գործընթացին մասնակցիլ. նախագահ Շիրաք նախագահ Լահուտին կը փոխանցէ, որ Ֆրանսա վճռակամ է օգնելու Լիբանանին՝ անոր անկախութեան, գերիշխանութեան եւ խաղաղութեան պահպանման օժանդակելու առնչութեամբ»:

Տեղական գետնի վրայ տեղի ունեցող իրադարձութիւններուն մասին «Տիար» օրաթերթը գրած է, թէ պետական ուսուցիչներուն գործադուր կը շարունակուի եւ քննութիւններուն սրբագրութեան համար կը սպասուի պետութեան հետ երկխօսութեան: Ըստ «Մուսթապայի», Ուրբաթ օրուն քարոզներուն մէջ իսլամ կրօնականներ շեշտը դրած են Քըրնէթ Շեհուանի սխալ ընթացքին եւ Լուս Անճելիսի մարոնիներու ժողովին ժխտական որոշումներուն վրայ:

Մնորադատնալով Փարիզ - 2 ժողովին՝ «Լիուս» նշած է, թէ արաբական եւ միջազգային համախոհութիւն կը տիրէ Փարիզ - 2 ժողովը յաջողցնելու համար, իսկ «Տիար» գրած է, թէ Ֆրանսա թիկունք կը կանգնի այս ժողովին գումարման, իսկ ամերիկեան կողմէ այս ուղղութեամբ դրական որոշ

նշաններ կ'երեւին: Նախկին նախագահ Է. Հըրաուիի եւ զօր. Միշէլ Աունի իրարու ուղղած ամբաստանութիւններուն ակնարկելով՝ «Անուար» գրած է. «Նախկին նախագահ Հըրաուի պատասխանեց զօր. Միշէլ Աունի դատ բանալու սպանալիքին եւ յատարարեց. յստակ տուեալներ ունիմ, որ զօրավարը 75 միլիոն տոլար իւրացուցած է պետութեան»:

Պաղեստինեան հարցին մասին «Տիար» գրած է, թէ Շարունի պատուիրակի Ուաշինկթըն այցելած է եւ քննած Պուշի վերջին ճառը գործադրութեան դնելու կարելիութիւնը: Միւս կողմէ, «Քիֆահ Արապի» նշած է, թէ Շարուն կրցած է Ամերիկեան համուլէլ խաղաղութեան իր ծրագիրին մասին, որ կը նախատեսէ պաղեստինեան հողերուն 49 առ հարիւրին վրայ ժամանակաւոր պետութեան ստեղծում 15 տարւան համար՝ նախքան ամբողջական իսլամի իրաւունքներուն: «Մուսթապայի» այս մասին գրած է, թէ Եգիպտոս աւելի տրամադիր կը թուի Արաֆատի փոխարինման առնչութեամբ եւ մտահոգ է պաղեստինեան ներքին հարցերով: Միջազգային այլ լուրերու կարգին թերթերը անդրադարձան իսրայէլեան «Էլ Ալ» ընկերութեան գրած մէջ իսլամ կրօնականներ շեշտը դրած են Քըրնէթ Շեհուանի սխալ ընթացքին եւ Լուս Անճելիսի մարոնիներու ժողովին ժխտական որոշումներուն վրայ:

Իբրանսեան ներքին կեանքին մասին, թերթերը լուսարձակի տակ առած են պրօ-աշրջութեան եւ կենսալոյրտի արաբական պետական համագումարի բացումը՝ նախագահ Լահուտի ներկայացուցած, կենսալոյրտի նախարար Միշէլ Աունի կողմէ:

Շար.Չ՝ էջ 10

MESROBIAN TECHNICAL COLLEGE
The Pioneer In Technical Education
Languages & Computer Courses
SUMMER SESSION
Make Up & Business Studies (Spring Session)
Tuesday, 9th of July 2002
Arax street, Bourj Hammoud
Tel: (01) 260504 - Fax: (01) 262955
E-mail: mesrobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com
ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԵՄՆՈՒԹԱՆ ԱՐՇԵՍԻՑ ԿԱՐԺԱՐԱՆԻ

Wedding lists at Galerie Vanlian, you will surely lose your mind...
Galerie Vanlian & HOME TRENDS

igloo Ets. Avo Soulahian
Family 34,0 L Combo
1 34,0 L
2 3,8 L
3 1,0 L
6
Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526

ՎԵՐԱՄՈՒՏ
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ Պուրճ Լամուտ
Հայ Աւետարանական Ծանօթան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի հոգաբարձութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ 2002 2003 տարեշրջանի վերամուտին վարժարանը կը վերաբանայ Երկրորդական Գ. դասարանը (Bacc. Life Science):
Արձանագրութիւն Արձանագրութիւնները պիտի սկսին Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002ին: Արձանագրութեան համար վարժարանի գրասենակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթի Ուրբաթ՝ առաւօտեան ժամը 9:00էն 12:00:
Վերաքննութիւն Վերաքննութեան կարօտ աշակերտներ պարտին ներկայանալ վարժարան 11 13 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 9:00ին:
Վերամուտ Ա. «Պրոօլ» եւ Երկ. Գ. կարգի աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 8:00ին:
Բ. Մնացեալ բոլոր կարգերու աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 7:30ին:
Գրասենակի ժամեր Ա. Յուլիս ամսուան ընթացքին գրասենակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթի Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:00էն 12:00:
Բ. Օգոստոս ամսուան ընթացքին գրասենակը բաց պիտի ըլլայ ամէն Երեքշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 12:00:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՆԱՄԱԿԱՆԻ

Ո՞Վ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ուսումնական տարեշրջանը աւարտած է արդէն եւ ամենուր տեղի կ'ունենան վկայականաց բաշխումներ: Անգամ մը եւս կրթական պատասխանատուներ, տնօրէններ կը ճանաչեն ազգային դաստիարակութեան, կեանքը ըմբռնելու եւ զայն իմաստաւորելու թելադրանքներ կը կատարեն շրջանաւարտներուն:

Այս բոլորին մասին մամուլին մէջ լոյս կը տեսնեն բողոքակցութիւններ, լուսանկարներ: Կարծեք ամէն ինչ բնական ընթացքի մէջ է:

Մինչ, կողմնակի գրոյցներու ճամբով, ժողովուրդը կ'իմանայ, որ նիւթական հաւասարակշռումի համար կ'արձակուի մեծաթիւ ուսուցիչներ: Ամէնէն անշուք ձեւով վերջ կը տրուի բազմավաստակ ուսուցիչներու պաշտօնավարութեան, փաստելու համար, որ իրօք ուսուցչութիւնը շատ ապերախ սպարէզ է...

Նիւթական բացերը փակելու համար հայ դպրոցէն հայ աշակերտներ արձակելու ցուցմունքներ կը տրուին հանգամանաւոր մարդոց կողմէ:

Ականջալուր եւ ակնաճառ կ'ըլլանք, որ գաղութներ երբեմնի պարծանքը նկատուած կրթական հաստատութիւններ, որոնք ամբողջ Սփիւռքի մարդու զիջումը հայրաքաղաքէն երկար տասնամեակներ, այսօր դարձած են... գաղութին համար մարդու զիջումը:

Վաղը դարձեալ Նիւթական է, դարձեալ վերամուտ: Դարձեալ կրթական առաքելութիւնը վերանորոգելու ուխտեր, խոստումներ, յոյսեր, խմբագրականներ եւ ցամաքակցիներ: Բայց այս անգամ՝ նուազ թիւով հայ ուսուցիչներու, նուազ թիւով հայ աշակերտներու համար: Բայց՝ առաւել թիւով օտար վարձարան յաճախող հայ աշակերտներու եւ օտար վարձարան պաշտօնավարող հայ ուսուցիչներու համար:

Արիւնհոսութիւնը կը շարունակուի: Ո՞Վ է պատասխանատուն:

ՄՏԱՆՈՎ ԵՒ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՍՐԲԱՎՐՈՒԹԵԱՆ ՅՈՅՍ ՉՈՒՆՆԵՑՈՂ ՍՐՅԱՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇ ՍՐԲԱՎՐՈՒԹԵԱՆ ԿՐԱՅԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ՝ ԿԱՍԿԱՍԻ ՏԱԿ

Քրիստոնէութեան 2000ամեակի առնչութեամբ Մոսկուայի պատրիարքութիւնը որոշած է հրատարակել 25 հատորնոց ուղղափառ հանրագիտարան մը:

Այս առնչութեամբ «Ճորճիւրն Թայմզ» կը տեղեկացնէ, որ գիրքի պատրաստութեան աշխատանքին կը մասնակցէին նաեւ վրացի գիտնականներ, սակայն հանրագիտարանի կարգ մը յօդուածներուն պատրաստութեան աշխատանքին ընթացքին վրացի գիտնականները հարցերու հանդիպած են: Յօդուածները կը նկատուին վրացական պատմական եւ կրօնական սրբավայրերը:

Հարցերը յառաջացած էին հանրագիտարանի խմբագրական անձնակազմին հետ, որուն մէջ ռուս պատմաբաններէն զատ ընդգրկուած էին նաեւ հայ գիտնականներ: Վրացի գիտնականներուն յօդուածները խմբագրական աշխատանքի ընթացքին ենթարկուած էին յետը իմաստային փոփոխութիւններու:

Ռուս եւ հայ գիտնականներու կարծիքով, Մցխեթի Ս. Խաչ վանքի, Փեթրիցոնի վանքի եւ Ինքիւրիկան Աստուածամոր սրբապատկերի վրացական ծագումը կասկածի ենթարկուած է: Այս պատճառով ալ վրացի գիտնականներուն խումբը որոշած է դադարեցնել համագործակցութիւնը Մոսկուայի պատրիարքութեան հետ:

Ա Մ Ա Վ Ե Ր Ջ Ի Շ Ա Ն Դ Ե Ս Ն Ե Ր ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ

Երեքշաբթի, 2 Յուլիսի երեկոյան ժամը 19:30ին, Համազգայինի Մեղանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի նորակառոյց բացօթեայ խաղավայրին մէջ տեղի ունեցաւ ժ.Բ. դասարանի աւարտական հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Հանդիսութեան ներկայ էին Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիան, կուսակցական եւ միութենական ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ծնողներ, շրջանաւարտներ եւ հիւրեր:

Ճեմարանի երկար տարիներու սովորութեան համաձայն, աւարտականները խաղավայր մուտք գործեցին կրթական պատասխանատու օրդ. Ալիս Գազանճեանի առաջնորդութեամբ: Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան հետք աւարտականները ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը. Նարինէ Չիլինկիրեան, Անժելա Նիւրբէթեան, Գրիգոր Ներսէսեան եւ Սիրվարդ Պոյաճեան հանդէս եկան նուագով, Մարիա Ֆէսլեան արտասանեց Մ. Իշխանի «Մինչեւ ո՞րք»ը, իսկ Նանօր Ոսկերիչեան եւ Դալար Մուրատիկեան արտասանեցին ժազ Ս. Յակոբեանի «Բառերը մեր հայերէնը»:

Ապա խօսք առաւ Ճեմարանի գործադիր տնօրէն Տիգրան Ժինպաշեան, որ ներկայացուց 2001 - 2002 տարեշրջանի դպրոցին մէջ կատարուած աշխատանքներուն պատկերը՝ կրթական, ընկերային, շինարարական եւ այլ բնագաւառներուն մէջ: Ան ըսաւ, թէ Ճեմարանի բարգաւաճման աշխատանքը տեղի կ'ունենայ տնտեսական աննախընթաց տագնապի մը պայմաններուն տակ, եւ թէ կ'ուզենք առողջ սերունդ, կենսունակ երիտասարդութիւն ու լաւ ապագայ ունենալ, պարտինք հիմա գոհութիւններ կատարել, ամէն պարագայի՝ ուսումն ու կրթութիւնը նախապատել զաւանսի: Ան շնորհակալութիւն յայտնեց վարժարանին օժանդակող կազմակերպութիւններուն, հիմնարկներուն, միութիւններուն եւ անհատ բարեկամներուն:

Ապա ան անցաւ մրցանակաբաշխման. Շանթ Այանեան արժանացաւ ժ.Բ. դասարանի լաւագոյն միջին ապահոված աշակերտի «Մարգ Արտալճեան», գիտական նիւթերու բարձրագոյն միջին ապահոված աշակերտի «Կարօ Սիւրմէլեան», հայագիտական նիւթերու լաւագոյն միջին ապահովող աշակերտի «Վիգէն Զաքարեան», արաբերէն լեզուի լաւագոյն միջին ապահովող աշակերտի «Լուի Օհանեան» մրցանակներուն: Լիզա Թիւթիւնեան արժանացաւ ժ.Բ. դասարանի գիտական նիւթերու մէջ լաւագոյն արդիւնք ապահոված աշակերտի «Կարօ Գափանեան» մրցանակին: Փաթիլ Նաճարեան արժանացաւ ժ.Բ. դասարանի հայերէնագիտական նիւթերուն լաւագոյն արդիւնք ապահոված աշակերտի «Սօսէ Սէփէթեան» մրցանակին:

Մրցանակներու արժանացան նաեւ Սելին Ղարիպեան (թ. դասարանի արաբերէն լաւագոյն միջին ապահոված աշակերտ), Ը. դասարանէն՝ Վահիկ Սողոմեան (լաւագոյն մարդիկ) եւ ժ.Բ. դասարանէն՝ Վիգէն Գրիգորեան (տիպոր մարդիկ):

Մրցանակներու բաշխումէն ետք Տիգրան Ժինպաշեան խօսք ուղղեց աւարտականներուն եւ ըսաւ, թէ ճեմարանական վկայականը յատուկ իմաստ ու նշանակութիւն ունի: Ան ոչ միայն կը նշէ երկրորդական



յաջող ուսման ընթացք մը, այլ կը պահէ հայերէնագիտական ուսման արդիւնք մը: Ճեմարանի վկայականը ցուցանիչ է հայեցի ու ազգային դաստիարակութեան, որուն տիրացողները պարտաւորութիւն կ'ունենան ճեմարանական կենցաղ ունենալու, այսինքն՝ դառնալու ազգային արժէքներու պաշտպան, Հայ Դատի գինուր, Հայաստանի բարգաւաճման շատագով, հայ մշակույթի սպասարկու ու հայութեան իրաւունքներուն տիրացման ձգտող հայորդիներ եւ աւելցուց. «Դուք կը դառնաք նաեւ բարոյական տէրերէն՝ հայ ճեմարան կողմէն այս նուիրական հաստատութեան. պարտինք ուրեմն տիրող իրաւունքով ու նախանձանդութեամբ տէրը ըլլալ ձեր մարդկային ու ազգային պարտաւորութիւններուն: Կը մաղթեմ, որ յաջողութիւնը միշտ ձեր կեանքին ընկերը մնայ, ու ինչպէս հայկական առածը կ'ըսէ՝ «Հողը բռնէք՝ ոսկի դառնայ»:

Ապա ան հրաւիրեց ճեմարանի տնօրէն խորհուրդի անդամները՝ Սկրտիչ Սկրտիչեանն ու Հրաչ Հաճէթեանը, մասնակցելու վկայականներու յանձնումին: Վկայական ստացան՝

ժ.Բ. գրական դասարանէն. Ալեքսանդրեան Կարին, Այվազեան Իվոն, Պարիկեան Անի - Սանտրա, Շահինեան Մարիամ, Տէկիրմէնճեան Ալին, Ֆէսլեան Մարիա, Կարապետեան Օսան, Գուրուճեան Կասիա, Գրիգորեան Սիւնիթա, Մելքոնեան Արփինէ, Մկրտիչեան Նանօր, Մուրատիկեան Դալար, Սպարտանեան Սարին, Ոսկերիչեան Նանօր, Տէր Պետրոսեան Հայկ, Տէկիրմէնճեան Յարութիւն, Ճամպուլեան Հրայր, Թումայեան Աւետիս:

ժ.Բ. գիտական դասարանէն. ա) Ընդհանուր գիտութիւն.- Պոյաճեան Սիրվարդ, Նաճարեան Փաթիլ, Նիւրբէթեան Անժելա, Չիլինկիրեան Նարին, Թիւթիւնեան Լիզա, Այանեան Շանթ, Պալմայեան Աթո, Գազանճեան Գէորգ, Գրիգորեան Վիգէն, Ներսէսեան Կրէկոր, Թէնքերեան Արտաշէս:

բ) Կենսաբանական գիտութիւններ. Յովսէփեան Ուրի, Տէր Թորոսեան Շանթ, Սիւմպիլեան Բաֆֆի: Վկայականներու բաշխումէն ետք, ժ.Ա. դասարանին կողմէ ուղերձ կարդաց Արին Այանեան, իսկ ժ.Բ. դասարանին կողմէ հրաժեշտի խօսքը կարդաց Կասիա Գուրուճեան: Ապա շրջանաւարտները երգեցին ճեմարանի քայլերգը:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԹՐԱՏԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

11 Յուլիսին տեղի ունեցաւ Թրատի Հայ Աւետարանական վարժարանի Սանկապատէզի հանդէսը: Չորս քայլերգներուն յաջորդեց վեր. Յովհաննէս Սվաճեանի Ս. Գրային ընթերցումը, որմէ ետք մանկապատէզի աշակերտները թատերախաղով, երգերով, պարերով եւ արտաստեղծութեամբ ներկայացուցին «Մննդականոն» թեման:

Գեղարուեստական յայտագիրէն ետք խօսք առաւ վարժարանի տնօրէն Վերա Սվաճեան, որ մանկապատէզի շրջանաւարտներուն յաջողութիւն, յարատեւութիւն եւ բարի երթ մաղթեց: Ապա տեղի ունեցաւ վկայականաց բաշխում:

Վարժարանին նախակրթարանի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ 21 Յուլիսին, վարժարանի սրահին մէջ:

Հանդիսութիւնը սկսաւ Սեդա Գարակէօզեանի Ս. Գրային ընթերցումով, որմէ ետք Զ. դասարանի աշակերտները ներկայացուցին ժազ Ս. Յակոբեանի «Մեզի հայ կ'ըսեն» բանաստեղծութիւնը: Ապա վարժարանին երգախումբը հանդէս եկաւ «Երգաքան» եւ «Դարբեր անցան» երգերով, իսկ Բաֆֆի Ազըլարեան՝ «Ջան հայրենիք» երգով: Դպրոցին պարախումբը յայտագիրին մասնակցեցաւ ազգագրական պարերով ու սուրերու պարով:

Գեղարուեստական յայտագիրէն ետք խօսք առաւ



Շաքէ Կէօզեան, որ շնորհը ուսման կարեւորութիւնը կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ: Ապա սահիկներու ցուցադրութեամբ եւ Վերա Սվաճեանի բացատրութեամբ ներկայացուցեցաւ վարժարանին միամեայ գործունէութիւնն ու աշխատանքները: Այս բաժինէն ետք տեղի ունեցաւ վկայականաց բաշխում եւ մրցանակաբաշխութիւն: Շրջանաւարտներուն կողմէ հայերէնով ուղերձ կարդաց Աւօ Քէօֆթեան, իսկ արաբերէնով՝ Նեսի Պոյաճեան: Հանդիսութեան աւարտին տնօրէնը յաջողութիւն մաղթեց շրջանաւարտներուն եւ շնորհը դրաւ ուսման անհրաժեշտութեան վրայ:

ՀԱՄԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ HAMPIG SASSOUNIAN CSP - L.A.C. B - 5 - 131 44750 60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

«ԿԱՐԿԱԶ»ԻՆ ԿԱՐԿԱԶԻՒՆԸ ԾԵՐԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

Համազգայինի Մշակութային Միութեան «Կարկազ» մանկապատանեկան երգչախումբը անգամ մը եւս հանդէս եկաւ իր քաղցրահնչիկ կարկաչիւնով, այս անգամ հայ Մերանոցին մէջ: Այսպէս, Երեքշաբթի, 2 Յուլիսի յետմիջօրէին շուրջ ութսուն կրտսեր, պատանի եւ երէց անդամներ, իրենց խմբավարին՝ Զաքար Քէչիչեանի առաջնորդութեամբ, Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոնէն, մեծ հայրերու եւ մեծ մայրերու տօնին առիթով, հետիոտն եկած էին իրենց սէրն ու յարգանքը ցուցաբերելու պատրաստութեամբ մամուլի անդամներուն եւ պապիկներուն:



Յայտագիրի աւարտին հաստատութեան տնօրէն Գէորգ Գարապոյաճեան ներկաներէն խնդրեց ծափահարել ոչ միայն երգչախումբին ու անոր խմբավարին, այլ նաեւ անոր օգնականներուն եւ մանաւանդ Համազգայինի Մշակութային Միութեան: Ապա տնօրէնը Զաքար Քէչիչեանին յանձնեց յուշանուէր մը:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԵՒՏՈՒՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Հայաստան Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան իրեն անդամավճար պարտական է 2,5 միլիոն տոլար: Ըստ առողջապահութեան նախարար Արարատ Մկրտչեանի, պարտք ունեցող երկիրներուն թիւը կը հասնի մօտ 50ի, որոնց շարքին են Երոպայական եւ արաբական պետութիւնները, ինչպէս նաեւ՝ ԱՊՀ երկիրներէ շատեր:

Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան եւրոպական շրջանային գրասենեակի տնօրէն Մարք Տանսըն այս առնչութեամբ նշեց, որ Հայաստանի մէջ իր աշխատանքներուն սկսած ԱՊՀ անդամ երկիրներու առողջապահութեան մարզին մէջ Համագործակցութեան խորհուրդի նիստին պիտի քննարկուի նաեւ այս հարցը:

Նշենք, որ Հայաստան Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան անդամակցած է 1993 թուականին:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅԻՆԻ ԹԻԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»Ի ՌԵՏ ԿԱՊՈՒԼԵՒՈՒ ՀԱՄԱՐ ՌԵՏԱՃԱՎՈՒՄԻ ՌԵՏՈՒՆԵԱՅԻ ԹԻԻԵՐՈՒ. -258526, 260115 ԵՒ 241274:

STUDIO Lantern Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ Գեո. 01-268866 ԵՒ 03-695399 Khabbaz-Orient Plus Travel & Tourism Varna Starting from 350\$ Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included Cyprus 3 days 185 \$ Boat trip to Cyprus & Greece 380 \$ 01.900598, 901598 - 03.258336, 256254 www.orientplus.com

Աշակուրայքի Էջ

ԱԲԵՏԻԷ ԻՍԱԿԱԿԵԱՆԻ ՍՏԵՐՍՈՒԹԵԱՆ ԶՆՈՐԻՒՄ՝ ՍԱՐԵԱՆԻ ԱՐՈՒՒՅՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ



«Ա. Իսահակեան (յետ մահու)» գործ՝ Մարտիրոս Սարեանի:

Տասնեակ տարիներ հայրենի կերպարուեստը գլխավորում էր ուսուցիչ Գևորգ Գևորգյանը...

Թէեւ Մարտիրոս Սարեանի արուեստին միջազգայնացումը որոշ չափով կը մտնէ ուսուցիչի տպագրողական գործունեությանը...

Ինչպէս այլ մեծուկները, Սարեան եւս ունեցած է իր վերելքի եւ համեմատաբար «անկման» շրջանները...

Սարեանի, Իսահակեանի եւ անոր ստեղծագործութիւններուն նուիրուած գծանկարներն ու գեղանկարները...

ՄՈՒԿԱՆ ԾԻՐԱՆԻ

Advertisement for Mano Plus giftware, featuring various ceramic and glass items like vases, plates, and figurines.



«Ապու Լալա Մահարի»ի նկարագրողուններէն. գործ՝ Մարտիրոս Սարեանի

Մայր երկրի համը ու հոտը ներծծած մեր վարպետները իրենց անձը չեն պատկերացրել հայրենիքից դուրս, ուրիշ «դարձ» ու ուրիշ խոստովանումներ չեն ունեցել:

1926ի աշնանը, երբ Իսահակեանը գալիս է Երևան, Սարեանն արդէն մեկնել էր Փարիզ:

Այս պայմանում գետեղել էն Սարեանի սքանչելի գծանկարներից երկուսը: «Արագած» (չապիտի վրայ), որքանով էլ Հայաստանի հաւաքական կերպարն է, «արեւի տակ պարզուած հեթաթը», նոյնքանով դիտողի առջեւ բացուած է բանաստեղծի ներշնչումների ակունքը, նրա հոգին՝ Շիրակը: Երկրորդը՝ «Հայաստանի սարերու մէջ» նոյնպէս սողորւած է Իսահակեանական շնչով:

Եղնիկները լուսաբացին Փրփրած լեռն մեղմ Գայեցին Սուր ժեռերով անցկեցան, Լոկի - մըջիկ անցկեցան:

Սարեանի «Հայաստանի սարերու մէջ» նկարի հետ արուեստասէրը ծանօթանում է առաջին անգամ: Փարիզում նկարուած այս գործը հեղինակը նուիրել է Հայ բարեկամներից մէկին, իսկ այժմ գտնուում է Նիւ Եորքում:

1929ին ստեղծուած է Սարեանի կրաֆիքական արուեստի լաւագոյն


ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Նմուշներէից մէկը՝ Իսահակեանի բանաստեղծութիւնների ժողովուրդը իրար հակուած երկու ուղեւորների միջով բացուած է լոյսով ողողուած Արագածը, որի ստորոտին խաղաղ ծխում է հայկական գիւղը:

1940ին Սարեանը ստեղծուած է մեծ բանաստեղծի հանրայայտ իւղաներկ դիմանկարը: Նոյն թուին, ըստ Լուսինի Սարեանի վկայութեան, նկարիչը կատարում է երկու տասնեակից ավելի նկարագրողուններ Մոսկուայում հրատարակուող Իսահակեանի ռուսերէն ժողովածուի համար: 1941ին դրանք յանձնուած են պետական հրատարակչությանը: Սակայն սկսուած պատերազմի պատճառով ժողովածուն լոյս չի տեսնում, իսկ նկարագրողունները, ինչպէս յետոյ պարզուած է, կորչում են:

1950ից յետոյ, իրենց ութերորդ տասնամեակի հանդիպումներին ու գրոյցները դառնում են անկասկածաբար նկարագրողունները: Սակայն Սարեանի «Ապու Լալա Մահարի»-ն Յայտնի են միայն այդ նկարագրողունները թերթեր, որոնք Մ. Սարեանի թանգարանի կողմից վերջերս են

մասնաններին տանը, մերթ գիտութիւնների ակադեմիայում կամ գաղափարական հաւաքովիներում: Նկարչական տեսողութիւնը միշտ մօտը պահող Սարեանի աչքից չի վրիպել ընկերը: Գծանկարներ կատարելով Իսահակեանից՝ նկարիչն ասես «գրուցել» է նրա հետ: Այլ



1957 A. Isakakyan

պոմում ընթերցողը կը ծանօթանայ այդ ճեպարկերի մի մասին: Բանաստեղծն էլ իր հերթին, տարբեր առիթներով ծոցատետրում գրի է առել ահա այսպիսի մտքեր. «Նա ինքնատիպ նկարիչ է, մեծ նկարիչ... Նրա վրձինը միակ է վիճակի է ներկայացնել

Հայաստանը, երկրի հոգին... անդորը, վեհ, վեհ, բիրիական երկիրը: Նրա շնորհիւ միայն զգում ես մեր աստուածաշնչային երկիրը, լեռները, հողը, մարդիկ...: «Երբ լինում ես մի ուրիշ երկիր, լաւ ըմբռնելու ու գրելու համար պիտի գգաս» մի տեսակ երկրագագոցում... օրինակ, Մ. Սարեանը գգում է Հայաստանը եւ տուել է ապրած, զգացած փեյզաժներ: Հայրենագագացում... Սարեանի նկարների մէջ կեդրոնացած է Հայաստանի պատկերը, համադրուած է, հանգուակուած»:

«Ինչքան էլ մարդ տխուր լինի, երբ նայի Մարտիրոս Սարեանի նկարներին, նրա վառվռուուն գոյներին՝ կ'ուրախանայ»: 1955ին Հայ ժողովուրդը տունում էր վարպետ եւ տնային արտադրանքի 80 եւ 75ամեակները: Աւագը կրտսերը կերտը մասին գրում է՝ «Սարեանն ամբողջ աշխարհին է, իսկ կրտսերը՝ «Յաւերթ ժողովրդի հետ» յօդուածները: Իսահակեանի ծննդեան օրը Սարեանը նուիրելու նպատակով երկու նկարներ է ներկատուած արած գում է ընկերով տուն: Այդ առիթով նկարիչը պատմում էր: «Շատ մարդ էր հաւաքուած: Եկել էին նաեւ կինոաշխատողներ: Աւետիքը յամուրէն չուզեց նկարահանուել, գլուխը դարձրեց ու անշարժ նստեց: Ես էլ օգտուելով առիթից, ճիշդ այդ դիմացի ինքն իր մէջ ամփոփուած, նկարեցի նրան»:

1957ին, մեծ բանաստեղծի մահուան տարին, Սարեանը կատարում է, իր բնութագրամբ «Ընդհանուր հագուածիւս գործոցներից մէկը», գոյնի նուրբ գագոցով թեթեւեղ ծանրակշիւ տրամադրութեամբ տողորուած մի դիմանկար եւս (Ջրաներկ): Իսկ 1962ի Փետրուարի 28ին, նկարիչն իր ծննդեան տարեդարձի օրը, Իսահակեանի ընտանիքից նուէր է ստանում մի ալպիւմ, որ բանաստեղծը ժամանակին գնած է եղել իր համար: Ալպիւմի առաջին էջում Սարեանը գրել է: «Կ'աշխատեմ լցնել այս տետրը նկարներով՝ նուիրելով Աւետիքի պայծառ յիշատակին»: Յաջորդ էջում Սարեանը նկարում է Իսահակեանին, գլուխը ափի մէջ, մտախոհ, Հայեացքը՝ Հայրենի լեռներին: Հիմա չկան մեր վարպետները: Մեզ է ժառանգուած նրանց խոր Հայրենասիրական արուեստն ու նոյն գագոցով կոփուած նրանց մեծ բարեկամութիւնը՝ իբրեւ փոխադարձ սիրոյ, յարգանքի ու ազնիւ մարդկայնութեան ուսանելի օրինակ:

ԻՍԱԿԱԿԵԱՆ՝ ՍԱՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

... Ամէն ազգ իր ձեռով, ոնով, իր կերպով հոգեղբուսելուում ունի, մարմնացում իր պարուններին ու մտածումներին, իր տեսիլների եւ իրեն յատուկ աշխարհապատկերման:

Նկարիչ Սարեանը գիտակցաբար եւ բնագղաբար, գեղարուեստի այս մեթոդումով մօտեցել է իր գործին եւ տարիներ, ճիշդ ու շարժով ուսումնասիրել է Հայաստանի եւ Արեւելքի գոյներն ու ձեւերը եւ մասնաւորապէս մեր մանրանկարչութիւնը, դարերի թանկ այս ժառանգութիւնը... Եւ այս ցիւրքից ստեղծել է իր արուեստը՝ միանգամայն գուտ հայկական, տոհմիկ: Եւ այսպիսով ցա գիտակամօրէն հիմն է դնում մեր նկարչական արուեստին կամ արեւելի ուղիղ վերագործելուում ու զարգացում է հիմը, որովհետեւ նրա նոր արուեստի տարրերը, պարուն են դարերի խորքում՝ մայր հողի վրայ:

Սարեանի կեանքն ու արուեստը սերտօրէն շաղկապուած են իրար հետ, եւ ուրիշ կերպ չէր կարող լինել. իսկական արուեստը իսկական արուեստագետի հոգու առարկայացումն է, նրա սիմվոլ պատկերը:

Երբ նայում էք նրա նկարներին, մի անհուն սիրով ու կարօտով լցում է ձեր հոգին դեպի հայ աշխարհը՝ «արեւի տակ պարզուած հեթաթ», մի խորին քնարականութիւն, իր չքնաղ լեռներով ու գետերով, արտերով ու եղնիկներով, պաշտելի հայ գիւղացիով եւ իր նուիրական գութանով... Եւ սիւսածում էք, ինչքան է սիրում հեղինակը այս երկիրն ու նրա հերկողից,



«Ա. Իսահակեանի դիմանկարը» գործ՝ Մարտիրոս Սարեանի:

ինչքան շատ, որ նոյն բուխ գագուումով է վարակում ձեզ: Երբ մօտենում էք նրան, ծանօթանում էք նրա մտքերի ու գագոցների հետ, դուր տեսնում էք, որ իրաւ, այդ նկարները նրա հոգուց են բխել. այդ նկարների նախատիպերը, Հայաստանը, գուրգուրուած, սիրուած են նրա հոգում՝ այնքան կաթոգից, այնքան գեղեցիկ...

Նկարիչ Սարեանը արուեստով ու կեանքով նուիրում է Հայաստանի վերածննդին ու վերաշինմանը, դարերի աղետների մէջ փշրուած մեր ժողովրդի ազգայնացմանն ու հայացմանը...

Ա. ԻՍԱԿԱԿԵԱՆ 1924 թ., Վեներտիկ

Կայսրուքի և Լեյունուքի

«ՆԻԷԹ»՝ ՌՈՒՄԵՐԵՆՈՎ

ՀԱՅԵՐԵՆԸ՝ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԷՉ

ՌՈՒՄԵՐԵՆԸ ԿԸ ՆԱԸԱՆՋԷ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ ԴՈՒՐՈՒ ՄԻՆՉԵՒ 2010 ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ՄԷՉ ՏԱՍԸ ԲՆԱԿԻՉԵՆ ՄԻԱՅՆ ՄԵԿԸ ԱՅՍ ԼԵԶՈՒՆ ՊԻՏԻ ԽՍՍԻ. «ՆԻԷՂՈՒԻՔ» ԿԸ ԳՐԷ.

Այս օրերուն քիչեր դրական բան մը ունին ըսելիք նախկին խորհրդային Միութեան լեզուին վերաբերեալ: Կեդրոնական Ասիոյ մէջ պատանհներ կ'ըսեն, թէ կ'ատեն ուսուցիչներ: Հազարաւոր մարդիկ փողոց իջած են Մոլտաւիոյ եւ Պիլնոուսիոյ մէջ՝ բողոքելու համար ուսուցիչնի գործածութեան դէմ: Նախկին խորհրդային պետութիւնները գայն ջնջած են իրենց կրթական պարտադիր ծրագիրներէն, եւ կարգ մը երկիրներ, ինչպէս՝ Լատվիա, խորհրդային օրէնքներ վաւերացուցած են անոնց դէմ, որոնք ուսուցիչնի կը գործածեն: Մոլտաւիոյ կամ Ուզպեքիստանի գիւղական շրջանները այցելող ուսուցիչները հաճելի խօսակցութիւններ մը ունենալ 35 տարեկանէն վեր անձի մը հետ, սակայն 20 տարեկան երիտասարդ մը գայն պիտի դիմաւորէ սառն աչքերով: «Եթէ նախապէս խորհրդային երկիրներու բնակչութեան 90 առ հարիւրը ուսուցիչնի կը խօսէր, այժմ համեմատութիւնը նուազ քան կէսն է», կ'ըսէ լեզուագէտ Վլադիմիր Ներոսիւթեան, որ Մոսկուայի մէջ ուսուցանող Լատվիայի լեզուական քաղաքականութեան խորհրդատուներէն մէկն է: Ան կը նախատեսէ, թէ մինչեւ ներկայ տասնամեակին աւարտը համեմատութիւնը պիտի իջնէ 10 առ հարիւր:

Ինչպիսի՞ փոփոխութիւն: Ոչ այնքան հեռու անցնալին ուսուցիչնի կը մըցնէր անգլերէնին դէմ իրեն կայսրութեան մը հասարակաց լեզուն: Ապա, 1990ական տարիներու սկիզբը, յեղափոխութիւններ տեղի ունեցան, երբ նախկին խորհրդային երկիրներ սկսան քաջալերել տեղական լեզուները իրեն անկախութեան խորհրդանիշ: Կազմակերպուած ձեւով հակառուս շարժումներ ծնունդ առին, եւ անոնք, որոնք կը տիրապետէին իրենց մայրենիին, իբրեւ վարժարաններ ըստ իրենց պաշտօնները ստացան համալսարաններու եւ պետական գրասենեակներու մէջ: Մինչ այդ ուսուցիչնի թեթուով վարժարաններ կ'որոնցուցին իրենց նիւթական աղբիւրները եւ փակուեցան: Ուրբանի մէջ փոքր տարրութեան լեզուական վէճեր առաջնորդեցին այնպիսի ծայրայեղ առաջարկներու, որ նոյնիսկ պահանջուեցան արդիւն ուսուցիչնի փոփոխութիւնը: Ծնունդ առին թունդ ազգայնական խմբակներու մէջ, որոնք հալածանքի ենթարկեցին ուսուցիչնի քաղաքականութիւնը եւ գրականութիւնը վաճառողները: Անցեալ Ապրիլին Լատվիոյ մէջ ճանապարհորդութեան կայան մը կ'որոնցուց իր արտօնագիրը, որովհետեւ խախտած էր իր յայտագիրներուն ուսուցիչնի բովանդակութիւնը 25 առ հարիւրի շուրջ սահմանափակելու օրէնքը:

Արդիւնքը ակնհայտ էր ամէն տեղ: Միայն ուսուցիչնի ղապաւանող դպրոցներուն թիւը 71 առ հարիւր համեմատութեամբ նուազած է Թուրքմենիստանի մէջ, 65 առ հարիւր համեմատութեամբ՝ Մոլտաւիոյ մէջ, 59 առ հարիւր համեմատութեամբ՝ Ղազախստանի մէջ եւ 47 առ հարիւր համեմատութեամբ՝ Ուզպեքիստանի մէջ: Նորանկախ երկիրներու ղեկավարներէն շատերը գոհ են: «Տասնամեակներ շարունակ նոյնիսկ չէինք կրնար մեր լեզուով մտածել», կ'ըսէ Մոլտաւիոյ խորհրդարանի անդամ Սիմֆան Չեքարեւու, որուն կուսակցութիւնը այս տարուան սկիզբը ցոյցեր կազմակերպեց Համայնավար կուսակցութեան գորակցութիւնը վայելող նախաձեռնութեան մը դէմ, որ կը միտէր ուսուցիչնի իրեն պարտադիր նիւթ վերստին ներառել Մոլտաւիոյ կրթական ծրագիրներուն մէջ: «Եթէ ուսուցիչնի ձեւով մը պիտի վերադառնայ իրեն պաշտօնական լեզուն, խորհրդային սովորութիւնները դարձեալ պիտի սողոսկին մեր ընկերութեան մէջ», կ'ըսէ Չեքարեւուն:

Ռուսերէնը յարձակումի թիրախ է նոյնիսկ Ռուսիոյ մէջ: Վերջին տասնամեակին աւելի քան 10 հազար օտար բուրձ, ինչպէս՝ պոլշի, սի, վաուչըր, պիզնիսմէճ, պիզնիսմէճ թափանցած են ուսուցիչնի մէջ: Ժիշը հակառակը, որ կը պատահի «է քաղաքներ օրհնած» ժամակէնի մէջ, ուր ուսուցիչնի բուրձ, ինչպէս՝ մօլոթօ եւ արուկ կը տիրապետեն անգլերէնին մէջ: «Ուզբէք կամ չուզբէք, ուսուցիչնի գործածութիւններուն կէսը կը կատարուի անգլերէնով», կ'ըսէ Ներոսիւթեան, որ կը պայքարի սահմանելու համար Փրանսերէնի պաշտպանութեան համազօր օրէնքներ՝ ուսուցիչնի մաքուր պահելու համար:

Կրեմլին կը գորակցի Ներոսիւթեան: Վերջին երկու տարիներուն նախագահ Վլադիմիր Փուտին աւելի քան կրկնապատկած է ուսուցիչնի պաշտպանութեան յատկացումը պետական պիտուէին: «Ռուսերէնը պէտք է պահպանել իբրեւ միջազգային հաղորդակցութեան լեզու», գէթ որպէսզի նախկին խորհրդային երկիրները կարենան «մըցիլ» այս աշխարհին մէջ, ինչպէս յայտարարեց ան, իր ընտանիքին անմիջապէս ետք: Նախագահ Փուտինի կինը՝ Լիւթիմիլա, որ լեզուագիտութիւն ուսած է, դարձած է լեզուական պահպանումի շատագոյն կրեմլինի մէջ: Ան ուսուցիչնի լեզուի կեդրոններու բացումը կը կատարէ նախկին խորհրդային երկիրներուն տարածքին եւ ներկայ կ'ըլլայ ուսուցիչնի «ողիմպիականներու», որոնց ընթացքին աշակերտներ կը մըցին քերականական ինչպիսիք լուծելով:

Յայտնապէս Մայր Ռուսիոյ լեզուն խօսելու կարողութիւնը իր առաւելութիւնները ունին նախկին խորհրդային երկիրներուն տարածքին այսօր գոյութիւն ունեցող գրական-

նութեան մեծ մասը տակաւին ուսուցիչն է: Սակաւաթիւ նախկին հանրապետութիւններ նիւթական աղբիւրներ ապահոված են նոր թարգմանութիւններ հրատարակելու համար: Ոմանք կը հաւատան, թէ ուսուցիչն կենդանի պահելը կարեւոր է, որպէսզի նախկին խորհրդային Միութեան մաս կազմող երկիրները Եւրոպական Միութեան նման կարենան հաղորդակցիլ իրարու հետ, ինչպէս կը մատնանչէ նախագահ Փուտին: Անցեալ տարի Ուրբանի խորհրդային խորհրդային պատուարները եւ ուսուցիչն իրեն պաշտօնական լեզու դասեց խըրը խըզերէնի կողքին: Տաճիկիստան կը ծրագրէ հետեւիլ օրինակին: Մոսկուայի լեզուաբանական դպրոցին դասախոս մը՝ Վիաչեսլաւ Պելաեուով կը բացատրէ, թէ վերջին տասնամեակին լատուկ «անկախութեան երազային գոնուականութիւն» սկսած է խամրիլ: «Մարդիկ սկսած են անդրադառնալ», թէ իրենց ազգայնական անկիւններուն մէջ ծուարիլը գիրենք ոչ մէկ տեղ կ'առաջնորդէ»:

Թերեւս անոնք իրաւունք ունին: Սակայն սերնդափոխութեան իրեն արդիւնք անժխտելի վիճ մը ի յայտ կու գայ, երբ հարցը կը վերաբերի ուսուցիչնի խօսելու: Դէպի Ուզպեքիստանի ամէնէն աղքատ շրջանը՝ Քարաքալպակիստան այցելութիւն մը բաւարար է անդրադառնալու փոփոխութեան: Քաղաքին կեդրոնը, փոքր թանգարանի մը եւ մշակութային կեդրոնի մը մէջ, խումը մը մեծ մայրեր, բոլորն ալ խորհրդային վարակարգի ծնունդներ եւ սահուն ուսուցիչնի խօսողներ, իրենց ամսական թոշակներն առնուակը 20 առ հարիւր կը վճարեն, որպէսզի իրենց թոշուները ուսուցիչնի դասընթացներու հետեւին: «Ես ուսուցիչն կը մտածեմ, ուսուցիչն արեւնս մէջ է», կ'ըսէ անոնցմէ մէկը: Սակայն երկու մանկապարտեզի ղեկավար, որոնք դանդաղօրէն կ'ուղղուին դէպի անգլերէնի նոր բացումը «Փոլիս» լեզուի դպրոցը, տարբեր ձեւով կը տեսնեն աշխարհը: Տասնամեակ մը առաջ անոնք եւս իրենց ուսուցիչնի պիտի կատարեալագործէին եւ պիտի պատրաստուէին աշխատելու խորհրդային կայսրութեան հեռուէր անկիւններուն մէջ: Այժմ անոնք կը կրեն անգլերէն քերականութեան եւ համակարգիչի գիտութեան գիրքեր: «Անգլերէնը դիւրին է, հետաքրքրական է եւ նորութիւն: Ռուսերէնը դարեւ ի վեր գոյութիւն ունի», կ'ըսէ 14 տարեկան աղջիկ մը: Նոյնիսկ աւելի փոքր երագներ փայլալոյս պա-

տանինքն այսպէս կը զգան: 12 տարեկան պատանի մը իր պարած կեանքին մասին մտածելով՝ կ'ըսէ. «Ռուսերէնը մեզ որեւէ տեղ չառաջնորդեր, հետեւաբար ինչու սորվինք»:

Ռուսիա կարգ մը անհաւանական դաշնակիցներ չհասած է իր լեզուն փրկելու պայքարին մէջ: ՕԹԱՆը եւ Եւրոպական Միութիւնը Պալեստինայի երկիրներէն պահանջած են հրաժարիլ իրենց «խտրական օրէնքներէն», ինչպէս քննադատներ կը բնորոշեն գանոնք: Այս երկիրներուն շարքին է Լատվիա, ուր քաղաքական թեկնածուներ պարտաւոր են սահուն լատվերէն խօսիլ, հակառակ այն իրողութեան, որ ուսուցիչնի լեզուները բնակչութեան 30 առ հարիւրը կը կազմեն: Անցեալ Ապրիլին Լատվիայէն ուսուցիչնի մը, որուն չէր արտօնուած մասնակցիլ Երեսփոխանական ընտրութիւններու, իր դատը լատվերէն Մարդկային իրաւանց Եւրոպական Ասոնիոյ մէջ: Փետրուարին ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար Ճորճ Ռապրիթը Լատվիոյ խորհրդարանը տեղեկ պահեց, թէ երկիրն լեզուական օրէնքները կրնային իրենց անդրադարձը ունենալ Լատվիան ՕԹԱՆի մէջ ներառելու որոշումին վրայ: Պատճառը լեզուական հարցը վէճի նիւթ է Մոսկուայի եւ Լատվիոյ միջեւ: «Մեր շահերուն չի համապատասխանը ընդունիլ երկիրներ, որոնք յաւ յարաբերութիւններ չեն մշակեր իրենց սահմաններէն ներս կամ դրացի երկիրներու հետ», կը բացատրէ ՕԹԱՆի պատասխանատուներէն մէկը:

Արդեօք կարելի պիտի ըլլա՞յ նախագահ Փութինի, ՕԹԱՆի եւ Եւրոպական Միութեան միացեալ ճիգերով ուսուցիչնի դուրս հանել իր դամբարանէն: Լաւատեսներ կ'ըսեն, թէ այս լեզուն նախապէս տոկացած է այլ յարձակումներու: 19րդ դարու սկիզբը քարձր խաւի ուսուցիչնի միայն Փրանսերէն կը խօսէին իրենց տուններուն մէջ, իսկ Մեծն Պետրոսի արեւմտեան ձեւի բարեկարգումները եւրոպական տարբեր բառերու բանակ մը հանեցին ուսուցիչնի դէմ: Սակայն այս անգամ Ռուսիա կը դիմադրուէ ոչ միայն լեզուական, այլ նաեւ իր ուժին ուղղուած մարտահրաւէր մը: 1904ին ժողովը Մոսկուայի յայտարարած է. «Փոքր երկիրներու օրերը վաղուց անցած են, եկած են կայսրութիւններու ժամանակները»: Դժբախտաբար ուսուցիչնի պարագային այսօրուան կարգախօսը կ'ըսէ՝ «բոլոր կայսրութիւնները կը կործանին»:

ԿՐԻՉԷՔ ԱՆԳԼԵՐԵՆ ԽՍՍԻԼ

«ԹԱՅՍ» ՃԱՐԱԹԱԹԵՐԹԸ ԿԸ ՆԿԱՐԱԳՐԷ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՎԵՐԱԾԻՆ ԱՆԳԼԻՍՍՍԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԸՍՄԱՐ ԱՃԽԱՐԿԻ ԳԼԽԱՒՈՐ ԼԵԶՈՒՆ ՊԱՏԱՍԸ

Դժուար է երեւակայել, թէ «Եւրոպիոյ» երգի մրցանքը հասարակաց որեւէ եզր կրնայ ունենալ Անգլիախօսներու Միութեան հետ: Երաժշտական այս անգուսպ մրցանքը ամէն տարի կայացող փառատուն մըն է, որ կը յիշեցնէ, թէ նեղ ազգայնականութիւնը տակաւին կը գոյատեւէ այժմու Եւրոպայի մէջ: Ի տարբերութիւն, Անգլիախօսներու Միութեան առաքելութիւնը աւելի մեծ է. անկիւն կը ձգտի համաշխարհային հասկացողութեան՝ անգլերէնի գործածութեան ճամբով: Սակայն որքան ալ անհաւանական թուէ, այս երկու կառույցները գտած են հասարակաց եզր մը: Անցեալ Մայիսին փոքրիկ Լատվիան շահեցաւ 2002ի «Եւրոպիոյ» մրցանքին առաջնութիւնը՝ «Այ ռուսնա» երգով: Ինչպիսի երգէն աւելի յատկանշական էր (սենթ ու իսելու երգեր կարելի է կարգալ համացանցի www.eurovision.tv կայքին մէջ) այն իրողութիւնը, որ անկիւն մրցանքին անգլերէնով կատարուած 16 երգերէն մէկն էր: Եւ կարծեք բաւարար չէր, որ այս երեւոյթը կ'ըրգովը լեզուական այլազանութեան շատագոյնները, Յունիսի սկիզբը Լատվիա դարձաւ Անգլիախօսներու Միութեան մէկ նոր մասնաճիւղը հիւրընկալող նորագոյն երկիրը:

Այս օրերուն, երբ երկու շաբաթը անգամ մը լեզու մը կը մեռնի աշխարհի մէջ տեղ մը, Լատվիոյ կրկնակիօրէն անգլիաժողովարանութիւնը յստակօրէն կը հաստատէ այն իրականութիւնը, թէ մարդիկ ամէն տեղ կ'ուզեն անգլերէն խօսիլ: Չինական մասնաբաժինը կրնայ ամէնէն աւելի մեծ թիւով խօսողները ունենալ (չուրջ 800 միլիոն հոգի մասնաբաժին կը խօսի), սակայն ընդունուած է, որ անգլերէնը, գոր կը խօսի շուրջ 1.9 միլիարդ հոգի, եւ որոնց 350 միլիոնը գայն կը գործածէ իրեն մայրենի շատ աւելի տարածուած համաշխարհային լեզուն է: Ամէնէն աւելի տարածուած երկրորդ լեզուն սպաներէնն է, գոր կը խօսի շուրջ 450 միլիոն հոգի, իսկ աշխարհի բնակչութեան մէջ Փրանսերէնը կը գործածէ միայն 130 միլիոն հոգի: Ամէնէն յատկանշական վիճակագրական տուեալը այն է, թէ աշխարհի տարածքին շուրջ 1.5 միլիարդ հոգի անգլերէնը կը գործածէ իբրեւ երկրորդ լեզու: «Անգլերէնը համաշխարհային գիւղիկ աշխատանքի լեզուն է», կ'ըսէ Անգլիախօսներու Միութեան նախագահը՝ Ալեն Ուալթըն:

Անգլերէնին ծաղկումը պատճառ դարձած է, որ Անգլիախօսներու Միութիւնը վերադառնայ հրապարակ: Անկիւն հիմնուած է Ա. Աշխարհամարտէն ետք, Լոնտոնի մէջ, «բարեկա-




ԸՍՄԱՃԽԱՐԿԱՅԻՆ ԼԵԶՈՒ. անցեալ Մայիսին 32 երկիրներ պատանիներ մասնակցեցան Անգլիախօսներու Միութեան կազմակերպած հրապարակախօսութեան միջազգային մրցանքին:

լու ծրագիրներ: Վերջերս Միերա Լէոնի մէջ, ուր մասնակցիլ գիտնորներ աւելի հաւանական է, որ քալըճիքով կրակել սորվին, քան թէ՛ անգլերէն, Անգլիախօսներու Միութիւնը տեղւոյն ըրիտանական հիւպատոսարանին հետ գործակցելով կ'աշխատի բարելաւել մասնակցներուն լեզուական եւ արտայայտուելու կարողութիւնները: Արդեօք անգլերէնը ունի՞ իր մուկ կողմը: «Չենք կրնար յաղթական կամ գոհունակ ըլլալու կեցուածք ցուցաբերել անգլերէնին յաղթողութեան ի տես՝ կը զգուշացնել Ուալթըն, - մասնաւոր՝ երբ ստիպու աւելի կ'ունենայ այլ լեզուներու եւ մշակոյթներու հաշուոյն»: Ան կը նախընտրէ անգլերէնը տեսնել իբրեւ պիտանի հարստութիւն՝ բոլորին համար: «Անգլերէնը կը կամրջէ վիճերը մարդոց եւ մշակոյթներու միջեւ: Անիկա բրիտանացիներուն եւ մերիկացիներուն սեփականութիւնը չէ, այլ կը պատկանի բոլորին»:

Ռուսաստանի մէջ վերջերս տեղի ունեցած ցեղասպանութիւնը ապացուցեց, թէ հասարակաց լեզու մը համակցութեան երաշխիք չէ: Սակայն ինչպէս Ռուսիային Չեքիա, որ Անգլիախօսներու Միութեան նախագահ եղած է, աւելիով մը յայտարարած է՝ «աւելի լաւ է խօսիլ խօսիլ խաղալ, քան թէ՛ պատերազմ- պատերազմ»: Անգլիախօսներու Միութիւնը կ'օգնէ, որ մարդիկ աւելի դիւրին եւ աւելի ընդհանրական մակարդակի վրայ խաղան խօսելու խաղը: Միայն թէ անիկա կարենար նաեւ փրկել «Եւրոպիոյ» մրցանքը:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՖՈՐՄԱՏԻՎ 1

ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐԻ ԿՈՒՂՂՈՒԻ ԴԷՊԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՏՂՈՍ

Ֆորմուլա 1ի 2002ի աշխարհի ախոյեանությունն 10րդ կրան փրիին, որ տեղի ունեցավ երեկ Սիլվերսթոունի մէջ, Բրիտանիա, Ֆեռնանդո Ալոնսոյի գերմանացի վարորդ Միքայել Շումախերը դարձեալ հանդիսացաւ ախոյեան, 60 լէփնոց (308,5 քմ.) շրջավազին արձանագրելով 1 ժամ 31 վայրկեան եւ 45 երկվայրկեան արդիւնք մը:

Շումախերը, որ կ'արձանագրէր իր 60րդ յաղթանակը, այսպիսով շահեցաւ եղանակի իր էօքստրորդ առաջնութիւնը: Բացի այդ մէկէն, ան իր խմբակիցին պրազիլցի Ռուֆէնս Պարիքելլոյի հետ, եղանակի իր չորրորդ տուպլէն իրագործեց:

Շումախերը այժմ 2002ի ախոյեան հանդիսանալու համար երկու շաբաթ ետք պէտք ունի միայն շահելու Ֆրանսայի կրան փրիին (Մակնի-Քուր):

Չարմանալիօրէն, քոլումպիացի խուան Փապիօ Մոնթոյա (Ուիլիլմս) դարձեալ կը ձայնակոչուի առաջին հանդիսանալ, հակառակ անոր, որ ան յաջորդաբար չորրորդ կրան փրիին ըլլալով կը գրաւէ փոխ-փոփոխութիւնի մրցումներուն առաջին դիրքը: Ան երեկ գրաւեց երրորդ դիրքը:

Նշենք, թէ երեկ ան կրան փրիին Պարիքելլո յաջողեցաւ կարելու իրագործում մը կատարել, որովհետեւ ան այս շրջավազը սկսաւ վերջին դիրքէն, որովհետեւ անոր ինքնաշարժը նախքան կրան փրիին սկսելը չաշխատեցաւ:

Ստորեւ՝ երէկուան կրան փրիին արդիւնքները.

- 1.- Միքայել Շումախեր (Գերմանիա) Ֆեռնանդի 1 ժամ 31' 45"
- 2.- Ռուֆէնս Պարիքելլո (Պրազիլ) Ֆեռնանդի 1 ժամ 31' 59"
- 3.- խուան Փապիօ Մոնթոյա (Քոլումպիա) Ուիլիլմս 1 ժամ 32' 16"
- 4.- Ժաք Վիլլիլմս (Քանադա) ՊԱՐ մէկ 15փ ուշ
- 5.- Օլիվիէ Փանիս (Ֆրանսա) ՊԱՐ մէկ 15փ ուշ

Ստորեւ՝ ընդհանուր դասաւորումը.

- 1.- Միքայել Շումախեր (Գերմանիա) Ֆեռնանդի 86 կէտ
- 2.- Ռուֆէնս Պարիքելլո (Պրազիլ) Ֆեռնանդի 82 կէտ
- 3.- խուան Փապիօ Մոնթոյա (Քոլումպիա) Ուիլիլմս 31 կէտ
- 4.- Ռալֆ Շումախեր (Գերմանիա) Ուիլիլմս 30 կէտ
- 5.- Տէյվիտ Քուրթարտ (Բրիտանիա) Մաքլարըն 26 կէտ



Միքայել Շումախեր՝ դարձեալ առաջին

Ստորեւ՝ խումբերուն դասաւորումը.

1.- Ֆեռնարի	118 կէտ
2.- Ուիլիլմս	61 կէտ
3.- Մաքլարըն	37 կէտ
4.- Ռեճօ	14 կէտ
5.- Սաուպըր	10 կէտ
6.- Ճորտըն	6 կէտ
7.- ՊԱՐ	5 կէտ
8.- Ժակուար	3 կէտ
9.- Արոգ	2 կէտ
10.- Թոյոթա	2 կէտ
11.- Մինարտի	2 կէտ

ՖՐԱՆՍԱՅԻ ՇԵՆՆԱՐԱՄԻՇՏՎԱԿԱՅԸ

ԱՐՄՍԹՐՈՆԿ ՇԱՀԵՑԱԻ ԺԱՄԱՅՈՅՅԻ ԴԷՄ ՄՐՑՈՒՄԸ, ԻՍԿ ՊԵՐԹՈՎԼԻԱԹԻ՝ Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄԸ

Անցեալ Շաբաթ օր սկսաւ 2002ի Ֆրանսայի շեննարի շրջանակէն շրջանակը, երբ Լուքսամպուրկի մէջ տեղի ունեցաւ ժամացոյցի դէմ մրցումը (7 քմ.): Երեք անգամ այս շրջանակը շահած եւ տիրոջանակ իր Լէնս Արմսթրոնկի (Մ. Ն.) շահեցաւ ժամացոյցի դէմ այս մրցումը, արձանագրելով 9 վայրկեան եւ 8 երկվայրկեան արդիւնք մը: Եու. Էս. Փոսթըլի խումբին շեննարի շրջանակէն շահեցաւ շապիտով յաղողեցաւ հազնիլ դեղին շապիկը: Ֆրանսացի Լորան Ժալպայէր հանդիսացաւ երկրորդ՝ երկու երկվայրկեան ուշացումով, իսկ Ռեմոնտաս Ռուսաս (Լիթվանիա)՝ երրորդ (չորս երկվայրկեան ուշացումով):

Նշենք, թէ Արմսթրոնկ 1999էն ի վեր չէր կրցած ժամացոյցի դէմ մրցում մը շահիլ:

Ան անդրադառնալով գերմանացի շեննարի շրջանակէն շահեցաւ շապիկը, ըսաւ, թէ ան վեհանքն գտնուեցաւ, երբ յայտարարեց, թէ թմրեցուցիչ գործածած է:

Ուրիշ, որ 1997ին շահեցաւ այս շրջանակը, իսկ 2000ին՝ հանդիսացաւ երկրորդ, այժմ վերադարձաւ ըլլալով բացակայ է Ֆրանսայի շրջանակէն: Կ'ակնկալուի, որ իր այդ կատարածին համար, գերմանացին մէկ տարիով կ'ախալկայուի:

Երէկ՝ Կիրակի տեղի ունեցաւ առաջին հանգրուանի մրցումը՝ Լուքսամպուրկէն Լուքսամպուրկ (192,5 քմ.), որ վերջ գտաւ զուգահեռացի Ռուֆէնս Պարիքելլոյի (Լամփրէ - Տալիլին) յաղթանակով, որ արձանագրեց 4 ժամ 49 վայրկեան եւ 16 երկվայրկեան արդիւնք մը:

23 տարեկան Պերթոկիլիթի, որուն ծածկանունն է «Պարիքելլո» իր արձանագրած այս յաղթանակէն ետք, հազաւ դեղին շապիկը, ընդհանուր դասաւորման մէջ երեք երկվայրկեանով գերազանցելով Լորան Ժալպայէրը (Ֆրանսա):

Անոր արձանագրած այս յաղթանակը մեծ յուսախաբուցիչ մը պատճառեց սփիլիթի վարպետ գերմանացի էրիք Ցապլի, որ հանդիսացաւ երկրորդ, նոյն արդիւնքը արձանագրելով:

Այսօր տեղի կ'ունենայ Բ. հանգրուանի՝ Լուքսամպուրկէն Սարպուրու (181 քմ.):

Ստորեւ՝ Շաբաթ օրուան ժամացոյցի դէմ մրցումի արդիւնքը.

- 1.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթըլ 9 վայրկեան 8"
- 2.- Լորան Ժալպայէր (Ֆրանսա) Սի. Էս. Սի. Թիլպալի 2" ուշ

ԹԵՆԻՍ. ՈՒԻՄՊԵՐԸՆԻ ՄՐՑԱԿԱՅԸ

ԼԵՅՈՐԸ ՇՈՒԹ ԵՒ ՄԵՐԵՆԱ ՈՒԻԼԻՄՍ՝ ԱՆՈՅԵԱՆ


Արձանփինսայ Դաիթ Նալպանտեան յաջողեցաւ Ուիմպլըրնի թենիսի պատմութեան մէջ իր անունը արձանագրել, հակառակ անոր, որ ան երէկ աւարտական մրցումին 6 - 1, 6 - 3 եւ 6 - 2 արդիւնքով պարտութիւն մը կրեց թի 1 դասուած աստրալիացի Լէյթըն Հուիթէն:

28րդ դասուած 20 տարեկան Նալպանտեան, որ առաջին անգամ ըլլալով կրան շրջանակէն մրցաշարի մը իր մասնակցութիւնը կը բերէր, յաջողեցաւ դառնալ առաջին արձանփինսայ, որ կը հասնի աւարտական հանգրուան:

Քորտուպալի մէջ բնակող Նալպանտեան, որուն հասակը 1,80 մ. է, մրցաշարին անակրկալը հանդիսացաւ, երբ իր արձանագրած վեց յաղթանակներուն շնորհիւ ապահովեց իր տոմարը: Ան 2000ին դարձած էր արիեստավար:

2001 թուականի աւարտին 47րդ դասուած Նալպանտեան այսպիսով իր մասնակցութիւնը բերաւ չորրորդ կրան շրջանակէն մրցաշարին: Առաջին անգամ ան մասնակցեցաւ Եու. Էս. Օփընի (անցեալ Օգոստոսին) հասնելով Գ. հանգրուանին: Այս ան հասաւ Աստրալիոյ բաց մրցաշարին Բ. հանգրուանին եւ վերջապէս, Ռոլան Կարոսի Գ. հանգրուանին: Ան անցեալ Ապրիլին, շահեցաւ իր ապարեկին առաջին բաժակը՝ տիրանալով Էսթրիլի մրցաշարին:

Հուիթի դէմ իր մրցումին նախօրեակին, Նալպանտեան ըսաւ. «Երբ Անգլիա ժամանեցինք



Լէյթըն Հուիթ եւ...



Դաիթ Նալպանտեան, որ յաջողեցաւ հասնիլ աւարտական հանգրուան

մարպիչիս յայտնեցի, թէ շատ հաւանաբար միայն երկու կամ երեք մրցումի կրնամ յաղթանակ արձանագրել: Այժմ յոյսով եմ, որ ապագային կրնամ շատ աւելի կարելու մրցաշարքերու մասնակցիլ եւ օրին մէկը կրան շրջանակէն տիրողսի մը տիրանալ:

Նալպանտեան աւարտականին իր տոմար ապահովեց, երբ Շաբաթ օր հինգերորդ եւ վերջին սէթին 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց 27րդ դասուած պելճիքացի Չաիէ Մալիսը, որ քիչ մը անհանգիստ ըլլալով դժուարութիւն ունեցաւ անոր դէմ իր կատարած մրցումին: Մրցումը այսպիսով վերջ գտաւ ի նպաստ Նալպանտեանի՝ 7 - 6, 6 - 4, 1 - 6, 2 - 6 եւ 6 - 2:

Մալիսի (21 տարեկան) կիսաւարտական հասնիլը եւս եղաւ բաւական կարելու, որովհետեւ ան 1904էն ետք հանդիսացաւ առաջին պելճիքացին, որ կը հասնի այդ հանգրուանը:

21 տարեկան Հուիթ, որ 1998ին դարձած էր արիեստավար, այսպիսով իր երկրորդ կրան շրջանակէն շահեցաւ, 2001ին Եու. Էս. Օփընի մրցաշարին տիրանալէ ետք: Նշենք, թէ ան յաջորդաբար երրորդ կրան շրջանակէն ըլլալով դասուած էր թի 1ը:

Նշենք, թէ Նալպանտեան - Հուիթ մրցումը տեւեց 1 ժամ 57 վայրկեան:

Անուշ երկուքը արդեօք ինչպէ՞ս կրցան հասնիլ աւարտական հանգրուանին:



... Մերենա Ուիլիլմս իրենց շահած բաժակներով

ԼԵՅՈՐԸ ՇՈՒԹ

- Ա. հանգրուան.- Եոնաս Պիորքման (Շուէտ) 6 - 4, 7 - 5 եւ 6 - 1
- Բ. հանգրուան.- Կրեկորի Քարալ (Ֆրանսա) 6 - 4, 7 - 6 եւ 6 - 2
- Գ. հանգրուան.- Ժիլիլմ Նովըլ (Աստրիա) 6 - 2, 6 - 1 եւ 6 - 3
- Դ. հանգրուան.- Միխայիլ Եուլյնի (Ռուսիա) 6 - 3, 6 - 3 եւ 7 - 5
- Քառորդ աւարտական.- Սիենկ Շալքէն (Հունարտ) 6 - 2, 6 - 2, 6 - 7, 1 - 6 եւ 7 - 5
- Կիսաւարտական.- Թիմ Հենման (Բրիտանիա) 7 - 5, 6 - 1 եւ 7 - 5

ՊԱՐԹ ԵՒ ՄԱՐՍԻԱՆ

- Ա. հանգրուան.- Տէյվիտ Սանչէս (Սպանիա) 6 - 4, 6 - 3, 4 - 6 եւ 7 - 5
- Բ. հանգրուան.- Փոլ - Հանրի Մէթիու (Ֆրանսա) 7 - 6, 7 - 6 եւ 6 - 3
- Գ. հանգրուան.- Ճորճ Պապըլ (Չեխիա) 6 - 2, 6 - 2 եւ 6 - 2
- Դ. հանգրուան.- Ռեյն Արթիւր (Աստրալիա) 6 - 4, 7 - 6, 2 - 6 եւ 7 - 6
- Քառորդ աւարտական.- Նիքոլայ Լափենթի (Էքուատոր) 6 - 4, 6 - 4, 4 - 6, 4 - 6 եւ 6 - 4
- Կիսաւարտական.- Չաիէ Մալիս (Պելճիք) 7 - 6, 6 - 4, 1 - 6, 2 - 6 եւ 6 - 2

ՍԱՐՊԱՆԱԿԱՆ ԱՐԳՈՒՄԸ

ՍԱՐՊԱՆԱԿԱՆ ԱՐԳՈՒՄԸ, որ տեղի ունեցաւ ամերիկացի Ուիլիլմս քոլորնի Սենթնայի եւ Վիլիլմսի միջեւ, վերջ գտաւ առաջին յաղթանակով, որ 7 - 6 եւ 6 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց իր մեծ քոյրը (22 տարեկան), որ դասուած է առաջին: Մերենա (20 տարեկան) դասուած է 2րդ:

Նշենք, թէ վերջին երկու տարիներուն, Վիլիլմս շահած էր նոյն այս մրցաշարքը:

ՖԻՇԸՐ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՊԱՀԱՆՁԸ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եռչբա Ֆիշըր Շարաթ օր յայտնած է, թէ Պոսնիոյ մէջ ամերիկեան խաղաղարար ուժերուն Միջազգային Ոճրադատ Ատենանի իրաւասութիւններէն անձեռնմխելու թիւն տալ պիտի նշանակէ անտեսել ատենանի կարեւորութիւնը:

ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը Չորեքշաբթի օր կանգուն պահած էր Պոսնիոյ մէջ ոստիկաններու մարդուժի առաքելութիւն մը, Ուաշինկթընի մէջ սպառնալիքը յետ կոչելէ ետք: Արդարեւ Մ. Նահանգներ սպառնացած էին վերջ տալ առաքելութեան, եթէ խորհուրդը չըրոշէ անձեռնմխելու թիւն հայթայթել ամերիկացի զինուորներուն:

Ֆիշըր, որ կը խօսէր Պերլինի մէջ ԵԱՀԿի ահաբեկչութեան մասին մէկ խորհրդակցութիւն, ըսած է, որ ամերիկեան նման անձեռնմխելու թիւն նաեւ ՄԱԿի իշխանութեան ի վնաս պիտի ըլլայ:

Ան նշած է, որ աւելի քան 70 երկիրներ արդէն որդեգրած են ՄԱԿի Հոռոմի համաձայնութիւնը, որուն հիմամբ Հիմնուած է ատենանը եւ աւելցուցած, որ «պէտք է ամէն ինչ ընել պաշտօնակազմը համար ատենանին օգտակար աշխատանքը»:

Ատենանը ստեղծուած է դատելու համար ցեղասպանութեամբ, պատերազմական ռիսիներով եւ մարդկայնութեան դէմ ռիսիներով ամբաստանելներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՕԹԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ

ԱՐԵՒԵՆԵԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԼԱՒԱՏԵՍ ԵՆ

Արեւելեան երոպական երկիրներ Շարթ օր յայտնած են, թէ վստահ են, որ իրենցմէ շատեր մինչեւ տարեկան ԵՕԹԱՆի անդամակցելու հրաւերներ պիտի ստանան, սակայն անոնք ըսած են, որ ապահովութեան գծով մտավախութիւնները պիտի չթերեւնան ո՛չ ալ արեւմտամէտ բարեկարգումները մօտ ատենէն վերջ պիտի գտնեն:

Լաթվիոյ մայրաքաղաքին մէջ կայացած ժողովի մը ընթացքին, նախկին համայնավար Եւրոպայէն 10 երկիրներու վարչապետներ ըսած են, թէ իրենցմէ եօթն Զեխիոյ մայրաքաղաք Փրակով մէջ Նոյեմբերին տեղի ունենալիք վեհաժողովին, պիտի հրաւիրուին ՕԹԱՆի անդամակցելու:

Փրակովի վեհաժողովը եւ Գեկտեմբերին Քոփենհագենի Եւրոպական Միութեան վեհաժողովը, որուն ընթացքին անիկա նախկին համայնավար 10 երկիրներ անդամակցութեան պիտի հրաւիրէ, պաշտօնապէս Արեւմուտքին պաշտպանութեան եւ տնտեսական գլխաւոր պլոքները պիտի հասցնեն նախկին խորհրդային շրջանակին մէջ:

Երկու ընդարձակումները վերջնական աւարտ մը կը նկատուին Եւրոպայի Բ. Աշխարհամարտի բաժանումին եւ յետհամայնավար պետութիւններուն մէջ վարձատրութիւն մը կը նկատուին տասնամեակի մը դժուարին բարեկարգումներու, որոնք աղքատ, բռնատիրական պետութիւններ, ժողովրդավար, շուկայի արեւելումով տնտեսութիւններու վերածած են:

Պարթեան երեք պետութիւնները՝ Լաթվիա, Լիթվանիա եւ Էսթոնիա, ինչպէս նաեւ նախկին Եուկոսլաւիոյ մաս կազմած Սլովենիան եւ Պուլկարիան ու Բուսնիան, հաւանաբար պիտի հրաւիրուին միանալու նախկին Վարշաւայի Ուխտի անդամներ Լեհաստանի, Հունգարիոյ եւ Չեխիոյ՝ անդամակցելով ՕԹԱՆի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ...

Շարունակուած 3րդ էջէն

Մշակութային գլխաւոր նիւթերու կարգին թերթերը անդրադարձած են Պաալպէի փառատօնի բացման: Փառատօնին բացումը կատարած է Ալպըն Պըրի քառեակը, որ իւրապատուկ եւ կախարակական երաժշտական մեկնաբանութեամբ հանդէս եկած է Պաալպէի դարուր սիւներուն ներքեւ:

Լիբանանեան մամուլը տուած է Լիբանանի մէջ գիրքի հրատարակութեան աշխատանքներուն վերաբերող աշխատանքին բացման լուրը:

«Մուսթափայ» օրաթերթը հարցազրոյց ունեցած է Պէյրութի քաղաքապետին հետ, որ խօսած է քաղաքապետութեան ծրագիրներուն եւ դիմագրաւած դժուարութիւններուն մասին: Ըստ թերթին, մօտ օրէն Պէյրութը պիտի օժտուի երեք հանրային պարտէզներով, լուսցարաններով եւ 1500 երթուկի նշաններով: Քաղաքապետը նշած է, թէ ամէն տեսակ աշխատանք ի գործ պիտի դրուի մայրաքաղաքի բարգաւաճման, պարգացման եւ գեղեցկացման համար:

Օրաթերթերը նաեւ լուսարձակի տակ առած են վանապան համալսարաններու, դպրոցներու եւ հիմնարկներու ամսկերթի հանդէսները: Ասոնց կարգին թերթերը անդրադարձած են Պէյրութի Ամերիկեան համալսարանի շրջանաւարտից հանդէսին: Համալսարանի այս տարւան հունձքը հաշուած է 1384 շրջանաւարտներ, որոնք ստացած են բարձրագոյն վկայական:

ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՍԸ ՊԻՏԻ ԶՕՐԱՅՆԷ ՍԱՏՏԱՄ ԸԻՍԷՅՆԸ

Կ'ԸՍԷ ԹԱՐԷՔ ԱՉԻԶ

Միացեալ Նահանգներուն կողմէ ՄԱԿի վէնքի քննիչներուն Իրաք վերադարձի պահանջին նպատակն է պինտորական գործողութեան մը ձեռնարկել Պաղտատի դէմ, ստուգելէ ետք, որ անիկա հաւաքական քանդուի վէնքեր չունի, հաղորդէ «Պապէլ» օրաթերթը:

«Պապէլ» կը գրէր, որ Ուաշինկթըն կ'երեւակայէ, թէ Պաղտատ տակաւին ունի յիշեալ վէնքերն է կը վախնայ այդ իրողութենէն: Այդ պատճառով ալ ամերիկացիները կ'ուզեն, որ քննիչները գան եւ եթէ վէնքեր գտնեն փնտցնեն, որպէսզի շուտով ձեռնարկեն յարձակումին՝ ապահով ըլլալէ ետք, որ Իրաք վտանգաւոր հրթիռներ ու վէնքեր չունի:

Իրաք եւ ՄԱԿ Ուրբաթ օր ձախողութեամբ աւարտեցին երկօրեայ բանակցութիւնները, որոնք կ'առնչուէին վէնքի քննիչներուն վերադարձին: Պաղտատ կը շարունակէ մերժել անոնց վերադարձը: ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան, որ ըսած էր, թէ բանակցութիւնները չեն կրնար մնալուն դառնալ, մերժեց նոր հանդիպումի մը թուականը յայտարարել: Դիւանագետներ յայտնեցին, որ Անան թուական պիտի որոշէ, երբ Իրաք պատրաստակամութիւն յայտնէ քննիչները վերընդունելու: Անան յայտնած էր, որ լուսախար է Կիեննայի բանակցութիւններուն ձախողութեամբ:

Միւս կողմէ, փոխ

վարչապետ Թարէք Ալիյ ըսաւ, որ Իրաքի դէմ յարձակում մը պիտի չօրացնէ, ոչ թէ՛ տկարացնէ Սատտամ Հիւսէյնը: Ալիյ աւելցուց, որ Պաղտատ գիտէ, որ ամերիկացիները կը պատրաստուին յարձակում մը գործելու: Ան ըսաւ նաեւ, որ արաբական աշխարհին մէջ ան որ կը պայքարի ամերիկացիներուն դէմ՝ իր ժողովուրդին աչքին աւելի զօրաւոր պիտի դառնայ. հետեւաբար Իրաք նոր դեկավարութիւն պիտի չունենայ եւ Սատտամ ու անոր կառավարութիւնը պիտի շարունակեն հետ գործակցիլ ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ:

Սատտամ իր կարգին ըսաւ, որ ամերիկեան պինտորական ու

ժը նահանջի մէջ է, եւ թէ յառաջիկայ տարիներուն աւելի պիտի տկարանայ:

● ԲՐԻՏԱՆԻՈՅ պաշտպանութեան նախարար Ռիչարդ Հեթքեյք յայտարարեց, որ Սատտամը կը պատրաստուի յարձակում մը գործելու: Ան ըսաւ նաեւ, որ արաբական աշխարհին մէջ ան որ կը պայքարի ամերիկացիներուն դէմ՝ իր ժողովուրդին աչքին աւելի զօրաւոր պիտի դառնայ. հետեւաբար Իրաք նոր դեկավարութիւն պիտի չունենայ եւ Սատտամ ու անոր կառավարութիւնը պիտի շարունակեն հետ գործակցիլ ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

«ՈՒՐԱՆԱՅԻՐ ՈՒՐԱՆԱՅՈՒՐ» ԽԱՆՈՒԹԻ...

Շարունակուած 3րդ էջէն

րարներուն եւ վաճառականներուն, որոնք ձրիօրէն տրամադրած են խանութին մէջ վետեղւած հագուստները եւ առիթ տուած են հայ ընտանիքներուն յարմար գիներով որակաւոր ապրանքներ գնելու համար: Ան նշեց, թէ վաճառքէն զոյացած գումարները եւս պիտի տրամադրուին հոգատարութեան կարիք ունեցող ընտանիքներուն:

Ապա խօսք առաւ Գեղամ եպս. Խաչերեան, որ ըսաւ, թէ իր տեսակին մէջ առաջին փոքրիկ այս ձեռնարկին գլխաւոր նպատակն է հասնիլ կարիքաւորին: Ան ըսաւ, թէ «ուրախացիր ուրախացուր» անունը կրող այս նախաձեռնութեան միջոցով իւրաքանչիւր անհատ առիթ կ'ունենայ ուրախանալու ինք իր գնած հագուստով եւ նոյն ատեն իր ներդրած գումարով օժանդակած կ'ըլլայ յանձնախումբերու ծրագիրներուն, որոնք նաեւ կը նպատակադրեն օժանդակութեան ձեռք երկարել բոլորին: Ան շնորհատրեց եւ գնահատեց այս ծրագիրին ետին եղող բոլոր անհատներն ու հաստատութիւնները, որոնց գլխաւոր մտահոգութիւնն է ժպիտ տեսնել ուրիշի դէմքին վրայ եւ ուրախացնել վայն:

Նշելը, թէ շատ յարմար գիներով հագուստ, պայուսակ եւ դպրոցական շրջանին գրեական պիտուք վաճառող այս խանութը հանրութեան առջեւ բաց պիտի ըլլայ ամէն ամսուան առաջին Շարթ օրը:

ՈՒՔՐԱՆԻՍ

33 ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐ ԶՈՂ՝ ԱՐԿԱԾԻ ՍԸ

Քրեի, 7 (ՌՈՅԹԸՐԸ).- Արեւելեան Ուքրանիոյ մէկ ածխահանքի մէջ ծայր տուած հրդեհ մը շարաքաղաքէն շին սպանած է 33 հանքագործներ, որոնք ստորերկրէն հայ հարիւրաւոր մէքը ցած վայրի մը մէջ բանտարկուած են ու խեղդամահ եղած են:

Հրդեհը ծայր տուած է Շարթ օրէն Տոնպաս ածխահանքի մէջ շուրջ 570 մէքը գետնին տակ: Անոր ծայր տալէն 12 ժամ ետք, հրդեհը տեղի 29 խմբակներ կը փորձէին մարել հրդեհը, որուն բոցերը եւ ծուխը ետ մղած էր պանոնը:

Մոնուպին 70 այլ հանքագործներ փրկուած են այրող հանքէն:

Ուքրանական մամուլը յայտնած է, որ Շարթ օրէն հրդեհը մը ծայր տուած է նաեւ աւելի արեւմուտք գտնուող մէկ այլ ածխահանքի մէջ՝ Քրիւիի Ռիի քաղաքին մօտ: Գետնին տակ աշխատող 60 հանքագործներ ապահով կերպով փրկուած են:

Ուքրանիոյ յառաջիկայ ամսուան անկախութեան 11րդ տարեդարձին նախօրեակին, հրդեհները յիշեցուն մըն էին երկրին խորհրդային քանդուած ենթակառուցիւն ծառանգին:

Անցեալ տարի, շուրջ 300 հանքագործ մահացած է երկրին հինգսոսմէ խորունկ ածխահանքերուն մէջ, որ աշխատանքային պայմանները չափազանց վատ են, ապահովութեան օրէնքները թոյլ, մինչ ֆինանսաւորումի միջոց չկայ՝ պանոնք արդիականացնելու համար:

ԵՐԿՈՒ ԶՈՐԷԱՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿԷՃԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՍԷՆՈՒ, 7 (ՌՈՅԹԸՐԸ).- Հարաւային Քորէայի կատարած հետաքննութիւնները ցոյց կու տան, որ Հիւսիսային Քորէա շարժանքներ առաջ ծրագրած էր Յունիս 29ին տեղի ունեցած միջադէպը, որուն զօր գացին չորս հարաւային քորէացիներ, յայտնեց պաշտպանութեան նախարարութիւնը կիրակի օր:

Մամուլը ասուելիս մը ընթացքին, ծովակալ Պայէ Սանկ Կի ըսաւ, որ Յունիս 29ի յարձակումը կանխամտածուած էր Փիոնկեանի կողմէ: Ան աւելցուց, որ յարձակումին բոլոր մանրամասնութիւնները նախօրք ուսումնասիրուած էին, եւ թէ Հիւսիսի ուժերը յաջողած են հարաւի եղբարակառ ուժերու նաւատորմէն անջատել ամէնէն տկար նկատուող նաւը՝ զայն դարձնելով գործողութեան թիրախը:

Հարաւային Քորէայի նախագահ Քիմ Տայէ Ճունկ դատապարտած էր յարձակումը եւ պահանջած, որ Փիոնկեանի ներողութիւն խնդրէ:

ԱՓՐԻԿԵՒ ՍԷՉ

ԳՈՐԾԻ 100 ՄԻԼԻՈՆ ՆՈՐ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ

Աշխատանքի Միջազգային կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Սուան Սոմալիա յայտնեց, որ յաջող տասնամեակին համար Ափրիկէի տարածքին անհրաժեշտ է, որ ստեղծուին 100 միլիոն գործի առիթներ՝ նոր աշխատաւորներու պահանջը բաւարարելու համար:

Սոմալիա ընդգծեց, որ ափրիկեան կառավարութիւնները պէտք է կեդրոնանան տեղական տնտեսութիւնները զօրացնելու աշխատանքին վրայ: Ափրիկեան երկիրներու տնտեսութեան նախարարները Տըրպընի մէջ՝ Հարաւային Ափրիկէ, խորհրդակցութիւնը մը ընթացքին պիտի ստեղծեն Ափրիկեան Միութիւնը:

ՌԱՍՉԻ ԻՐԱՆԻԻ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ...

Շարունակուած 3րդ էջէն

Մաթար կոչ ուղղեց իշխանութիւններուն՝ ընդդիմադիրներուն մէջ տեսնելու ազնիւ ու հայրենասէր հոգի մը եւ անոնց հետ վարուելու՝ յարգելով իւրաքանչիւրին իրաւունքները:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, իրանի ընտանիքին անունով խօսք առաւ Իրանիի կինը՝ Ճեւի Իրանի, որ շեշտեց, թէ Ռամզի Իրանիի հարցին հետապնդումը իր նպատակն է, Լիբանանի գերիշխանութիւնը՝ փափաքը, Լիբանանի անկախութիւնը յոյսը եւ Լիբանանի դատաստանը՝ արդարութիւնը:

Ապա խօսք առաւ Պէյրութի Քաղաքապետութեան Խորհուրդի անդամ Ճօ Սարգիս, որ խօսեցաւ Լիբանանեան Ուժերու կուսակցութեան քաղաքական ուղղութեան մասին:

ԱՐԱՅԱԹ ԿԸ ԳԻՄԱԳՐԱԿԷ...


Շարունակուած 3րդ էջէն

րար Շիմոն Փերէսի հետ: Միւլէյման յայտնեց, որ Եգիպտոս կ'ուզէ օժանդակել պաղեստինեւի խաղաղութեան տագնապը մեղմացնելու աշխատանքին: Պըն Էլիպար իր կարգին Եգիպտոսի պատուիրակին փոխանցած է, թէ Արաֆաթ պետք է փոփոխութեան ենթարկէ ահաբեկչութեան քաղաքականութիւնը, որպէսզի Իսրայիլ հաւատայ, որ բարեկարգումներ իսկական են:

Իսրայիլացի պաշտօնատարներ նախատեսած էին, որ նախագահական խորհրդատու Ռասմա Պայ պիտի ընկերակցի Միւլէյմանի, սակայն Եգիպտական աղբիւրներ հաղորդեցին, որ Պայ Իսրայիլ չէ մեկնած: ● ՅՐԱՆՍՍՅԻ արտաքին գործոց նախարար Տոնիսք տը Վիլիէն կոչ ուղղեց Միջին Արեւելի խաղաղութեան շուրջ միջազգային խորհրդածողովի մը: Վիլիէն, որ կը խօսէր Մուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէի հետ տեսակցութեան մը ատարին, շեշտեց, որ քաղաքական լուծում մը միայն պիտի կարենայ մնալուն ու ամբողջական խաղաղութիւն բերել շրջանին:

(ՌՈՅԹԸՐԸ)

The Revolutionary Japanese Air Conditioners



DYNAMIC made in Japan

I like it Powerful Ideal Cool DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357